



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Ինչպե՞ս Ջլացուեցաւ Երկրորդ Ոսկին

Պրագիլի Ռիօ Տէ Ժաներօ ծովափնայ քաղաքին մէջ իր աւարտին հասաւ 31-րդ ամառնային Ողիմպիականը:

17 օրերու վրայ երկարող ու տասնեակներով մարզածներ ընդգրկող խաղերու ընթացքին, աշխարհի տարբեր երկիրներուն ու ժողովուրդներուն միջեւ խաղաղութեան, համերաշխութեան ու բարեկամութեան պատգամը մարմնավորուեցաւ, միաժամանակ շնորհելով ազգային հպարտութեան պահեր՝ բարձրագոյն նուաճումներու հասնող երկիրներուն համար:

Խաղերուն մասնակցող 206 երկիրներուն մէջ փոքրիկ Դայաստանը գրաւեց 42-րդ տեղը՝ ապահովելով մէկ ոսկի եւ երեք արծաթ մետալներ:

Առօրեայ մտահոգութիւնները եւ ներքին քաղաքական հարցերը պահ մը մոռնալով, Դայաստանի ժողովուրդը ու իր հետ նաեւ սփիւռքահայութիւնը, ուշի-ուշով հետեւեցան Ռիօ-յէն հասնող լուրերուն: Առաջին մէկ շաբթուայ ընթացքին բոլորիս յուսախաբութիւնը մեծ էր: Մէկը միւսին ետեւէն պայքարէն դուրս մնացին Դայաստանի բազմաթիւ ներկայացուցիչներ: Շուտով սակայն, այդ յուսախաբութիւնները վերածուեցան ցնծութեան, երբ Յունահռոմէական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանեան եկաւ, անկախ Դայաստանի պատմութեան մէջ երկրորդ ոսկէ մետալը շնորհելու Դայաստանին: Իսկ, երկրորդ ոսկի մը խլուեցաւ Դայաստանէն, կողմնակալ բացայայտ մրցավարութեան եւ միջազգային այլեւայլ հաշիւներու պատճառով:

Ըմբիշ Միիրան Յարութիւնեան գրկուեցաւ պատուոյ հարթակի բարձրագոյն աստիճանին կանգնելու պատիւէն, հակառակ որ ան տիրապետեց իր մրցակիցին: Մրցավարը երկու յաջողակաւ զգուշացում տալով հայ մարզիկին, մէկ կէտ շնորհեց մրցակիցին: Իսկ, երբ մեծամարտը աւարտեցաւ 1-1 արդիւնքով, պատահեցաւ աւելի զարմանալին: Քանի որ վերջին կէտը արձանագրուած էր սերպիացի ըմբիշի օգտին, ոսկին եւս շնորհուեցաւ անոր, որու ազգակից Սերայ մը, կը վարէ Յունահռոմէական ըմբիշամարտի միջազգային ընկերակցութեան նախագահի պաշտօնը: Այս համագամագը եկաւ աւելի ամրապնդելու կասկածները՝ մրցավարներու կողմնակալութեան պատճառներու մասին:

Դժբախտաբար Դայաստանի Ողիմպիական Կոմիտէն մինչեւ օրս պաշտօնական բողոք չէ ներկայացուցած այս անարդար որոշումին առթիւ, իսկ աշխարհի տարբեր կողմերէն, հայ եւ ոչ հայ, հազարաւոր մարզատներ կը պահանջեն, որ ոսկի մետալը վերադարձուի արժանիին՝ Դայ մարզիկին:

«ՄԱՍԻՍ»

«Թրանսփարընսի Ինթըրնեշնըլի» Զամաձայն՝ Դայաստանի Մէջ Իշխանութիւնը Կ'օգտագործուի Դարստանալու Զամար

Պատասխանելով Հայաստանի Արդարադատութեան նախարարի ելոյթին, «Թրանսփարընսի Ինթըրնեշնըլ» (Միջազգային Թափանցիկութիւն) հակափոփոխութեան (հակափոփոխութեան) կեդրոնի ղեկավար Վարուժան Հոկտանեան յայտարարեց, որ հակառակ Հայաստանի մէջ իշխանութիւններուն կողմէ շարունակ յայտարարուող փոփոխութեան դէմ պայքարին, նախորդ մէկուկէս տասնամեակի ընթացքին այդ ուղղութեամբ ոչ միայն որեւէ յառաջընթաց չկայ, այլ իշխանութիւնը կ'օգտագործուի հարստանալու համար:

«Ես վստահ եմ, որ Յատուկ քննչական ծառայութիւնում ինթըրնեթ կայ, եւ Յատուկ քննչական ծառայութիւնը ծանօթ է նաեւ բարձրաստիճան պաշտօնատար անձանց էթիքայի յանձնաժողովի կայքէջին: Որովհետեւ կան բաներ, որտեղ արդէն պէտք է խառնուեն իրաւապահ մարմինները: Այսինքն, երբ որ դու տեսնում ես, ասենք, տարօրինակ նուիրատուութիւններ այդ յայտարարագրերում եւ այլն, կարելի է փորձել հետեւել եւ նոյն այդ քննչական մարմինները փորձեն հասկանալ, եթէ ունեն քաղաքական կամք ու եթէ անձերը նշանակութիւն չունեն, այսինքն օրէնքն

է գերիշխում եւ ոչ թէ այն, որ դա նախագահ է, նախարար է եւ այլն, փորձեն հասկանալ եւ պարզել, թէ որտեղից այդ գումարները»:

Անյայտ անձերու կողմէն Հայաստանի բարձրաստիճան պաշտօններուն կատարուող բազմամիլիոն նուիրատուութիւնները նորութիւն չեն հանրութեան համար: Ամենատպալուրիչ օրինակներէն մէկը Պետական եկամուտներու կոմիտէի նախագահ Յովհաննէս Յովսէփեանին է, որ 2008 թուականին սկսեալ Հանրապետութեան նախագահի վերահսկողական ծառայութեան ղեկավարն էր եւ այս տարի Մարտին նշանակուեցաւ իր ներկայիս պաշտօնին:

Ըստ բարձրաստիճան պաշտօնատար անձերու էթիքայի (բարոյագիտութեան) յանձնաժողովին ներկայացուած յայտարարագրին, նախորդ հինգ տարիներուն Յով-



«Թրանսփարընսի Ինթըրնեշնըլ» կեդրոնի ղեկավար Վարուժան Հոկտանեան

սէփեան ստացած է աւելի քան 3 միլիոն տոլարի նուիրատուութիւն ու երբեք չէ ներկայացուցած իր տիկնոջ ունեցուածքին մասին յայտարարագիր: Լրատուամիջոցներու հրապարակումներէն ետք միայն, պաշտօնեան յայտարարեց, որ նման շուսյ նուիրատուութիւններ կատարողը Մոսկուայի մէջ բնակող իր եղբայրն է, սակայն, ոչ մէկ խօսք թէ եղբայրը ինչպէս վաստակած է միլիոնները:

Իր ունեցած ելոյթի ընթացքին Արդարադատութեան նախարարը ընդգծած էր, որ չես այսու

Շար.ը էջ 5

ԼՂՀ Կառավարութեան Ձեկոյցը՝ Ապրիլեան Պատերազմէն Ետք Զաւարուած Գումարներու Մասին

ԼՂՀ կառավարութիւնը հրապարակեց զեկոյց-տեղեկանք Ապրիլ 4-ին Արցախի մէջ բացուած յատուկ հաշուեհամարներուն փոխանցուած գումարներու եւ կատարուած ծախսերու մասին: Մինչեւ օրս հանգանակուած է 4 միլիարդ 661 միլիոն դրամ (չուրջ 10 միլիոն տոլար), որմէ՝ Յուլիս 1-ի դրութեամբ, ծախսուած է 2 միլիարդ 101 միլիոն դրամ՝ հետեւեալ ձեւով.

- Փոխանցում ԼՂՀ պաշտպանութեան նախարարութեան՝ 597,826,000 ՀՀ դրամ: Այդ միջոցները տնօրինած է պաշտպանութեան նախարարութիւնը՝ ըստ իր կարիքներուն եւ առաջնահերթութիւններուն:

- Ռազմական նշանակութեան տեխնիկայի եւ սարքաւորումներու ձեռքբերում՝ 736,529,100 ՀՀ դրամ:

- Ինժեներական աշխատանքներու կատարում՝ 356,452,800 ՀՀ դրամ: Այս աշխատանքները ներառած են դիրքերու ամրացում, խրամուղիներու քանդում, թիկունքային ճանապարհներու կառուցում եւ բարեկարգում, հակատանկային փոսերու ցանցի բարելաւում եւ այլն:

- Պաշտպանութեան Բանակի կարիքներու համար ենթակառուց-

ուածքներու, փոխադրամիջոցու եւ կապի ծառայութիւններու ու զլխաւոր ծախսերու իրականացում՝ 198,859,700 ՀՀ դրամ: Այս ծախսերուն միջոցով բարելաւուած են առաջնագծին սպասարկող ենթակառուցուածքները եւ արդիականացուած են կապի միջոցները:

- Զօրակոչուած քաղաքացիներուն եւ կամաւորականներուն դրամական աջակցութեան տրամադրում՝ 532,372,100 ՀՀ դրամ:

Ֆինանսական աջակցութիւն տրուած է միայն ԼՂՀ գրանցում ունեցող այն կամաւորներուն, որոնք կա՛մ գործազուրկ/ինքնագաղթուած էին եւ որոշակի եկամուտ կորսնցուցած են կամաւորութեան ընթացքին, կա՛մ հաստատագրուած գումարի չափէն (օրական 5,000 ՀՀ դրամ) աւելի ցած աշխատավարձ կը ստանային:

Բացի կառավարութեան յատուկ հաշուեհամարուն մէջ հաւաքագրուած գումարներով կատարուած աշխատանքներէն, տարբեր ֆիզիկական եւ իրաւաբանական անձեր եւս առանձին աջակցութիւն ցուցաբերած են յատկապէս տեխնիկական միջոցներու, մեքենաներու եւ անհրաժեշտ այլ պարագաներու տրամադրման տեսքով:

Լուիզիանա Նահանգի Ողողումներուն Զետեւանքով Տուժած Եւ Նաեւ Զայ Ընտանիքներ

Վերջին երկու շաբաթներուն Միացեալ Նահանգներու Լուիզիանա Նահանգի մէջ տեղի ունեցած ողողումները նիւթական շատ մեծ վնասներ պատճառեցին շրջանի բնակչութեան:

Արտակարգ հեղեղներէն ամենէն աւելի տուժեց նահանգի մայրաքաղաք Պաթոն Ռուժը, ուր գործող ՄԴ-24 «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղի պատասխանատուները տեղեկացուցին, որ քաղաքի փոքրաթիւ հայ գաղութի կարգ մը բնակիչներ կրած են նիւթական մեծ վնասներ, ոմանք կորսնցնելով իրենց բնակարանները:

Շրջանի մեր ընկերները օգնութեան հասնելով իրենց ազգակիցներուն, ժամանակաւոր ապաստարաններով ապահոված են անոնց: Երեքշաբթի, Օգոստոս 23-ին նախագահ Պարաք Օպամա այցելեց վնասուած շրջանները, խոստանալով Դաշնակցային կառավարութեան օգնութիւնը 100 հազարէ աւելի տուժածներուն:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՒ

Հայաստանի Ուժգին Ապտակը

ԹԱՍԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՄ

Ղարաբաղեան բանակցութիւններում այսօր խօսել փոխգիշտումների մասին պարտողականութիւն է, եւ Հայաստանի որեւէ պաշտօնեայ իրաւունք չունի խօսել կարգաւորումից, որովհետեւ այդ հարցերը Լեւոնային Ղարաբաղի իրաւասութեան ներքոյ են՝ լրագրողների հետ հանդիպմանը յայտարարել է Հայաստանի փոխարտգործնախարար Շաւարշ Քոչարեանը:

Նա ընդգծել է, որ ներկայումս բանակցութիւններում տեղաշարժ չի երեւում: «Ես կարծում եմ, որ փոխգիշտումների, նմանատիպ հարցերի շուրջ խօսելը պարտողականութիւն է, որովհետեւ առ այսօր ես Բաքուից չեմ լսել որեւէ յայտարարութիւն գիշտման մասին: Երբ որ Բաքուն խօսի գիշտման մասին, այն ժամանակ կարելի է խօսել փոխգիշտումների մասին: Քանի դեռ այնտեղ չեն խօսում, ինքնին նոյնիսկ այդպիսի հարցեր բարձրացնելը կարծում եմ, կոռեկտ չէ, առնուազն կոռեկտ չէ», - ասաց Քոչարեանը՝ յաւելելով. - «Այլ բան է, որ բանակցային գործընթացի մասին խօսելիս հայկական կողմերն ասում են, որ հա, փոխգիշտումների պատրաստ ենք, ընդհանուր: Բայց քանի որեւէ յայտարարութիւն չկայ Ատրպէյճանի կողմից, աւելին՝ քանի դեռ այնտեղից աւելի են կոշտանում դիրքերը, ապա հայկական կողմերին խօսել ինչ-որ գիշտումների մասին, ինձ թւում է, անիմաստ է»:

Փոխարտգործնախարարի խօսքով, հայկական կողմի նպատակը շատ յստակ է՝ Լեւոնային Ղարաբաղը չի կարող լինել Ատրպէյճանի կազմում եւ պէտք է երաշխաւորուած լինի Լեւոնային Ղարաբաղի ժողովրդի եւ հանրապետութեան անվտանգութիւնը: «Իսկ ինչ վերաբերուած է արդէն դետալներին՝ ինչպէս դրան հասնել, դա այլ խնդիր է, որը պայմանաւորուած է նաեւ այն կողմի դիրքորոշմամբ, որը բանակցութիւնների մէջ է, այսինքն՝ մեր հակառակորդի դիրքորոշմամբ, իսկ նրա դիրքորոշումը շատ կոշտ է, եւ այդ պարագայում, խօսել դետալների մասին, ուղղակի անիմաստ է», - ասաց փոխարտգործնախարարը:

Շ. Քոչարեանը նշել է, որ Հայաստանն իրաւասու է խօսել Լեւոնային Ղարաբաղի տարածքային ամբողջականութեան մասին. «Ինձ համար կամ Հայաստանի որեւէ պաշտօնեայի համար չկայ փոխգիշտում կամ գիշտում հասկացութիւն, որովհետեւ այն հարցերը, որոնք վերաբերում են կարգաւորմանը, հիմնականում Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան իրաւասութիւնների մէջ

են: Այսինքն, Հայաստանի որեւէ պաշտօնեայ նոյնիսկ իրաւունք չունի դրա մասին խօսել: Այլ բան, որ այսօր ստեղծուած իրավիճակում քանի դեռ ԼՂՀ-ն լիարժէք չի մասնակցում բանակցային գործընթացին, չընդհատելու համար այդ գործընթացը՝ Հայաստանը մասնակցում է, բայց Հայաստանը իրաւասու չէ խօսել Լեւոնային Ղարաբաղի փոխարէն թէ՛ նրա կարգավիճակի մասին, թէ՛ նրա տարածքային ամբողջականութեան մասին»: Ըստ Քոչարեանի՝ թէ՛ Վիեննայում, թէ՛ Սանկտ-Պետերբուրգում դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ որեւէ պայմանաւորուածութիւն ձեռք չի բերուել, այլ խօսուել է հրադադարի ռեժիմի ամրապնդումից:

Այսպիսով, պաշտօնական Երեւանը, կարելի է ասել, ապրիլեան քառօրեայ պատերազմից յետոյ, առաջին անգամ յստակ յայտարարում է, որ Հայաստանի որեւէ պաշտօնեայ իրաւունք չունի խօսել կարգաւորումից, որովհետեւ այդ հարցերը Լեւոնային Ղարաբաղի իրաւասութեան ներքոյ:

Այսինքն՝ Ղարաբաղի վերաբերեալ բոլոր կարեւոր որոշումները՝ փոխգիշտումներից, աւարտած Ղարաբաղի կարգավիճակով, պէտք է որոշի Ղարաբաղը:

Ուշագրաւ է, որ Շ. Քոչարեանը փաստում է, որ փոխգիշտումների, նմանատիպ հարցերի շուրջ խօսելը պարտողականութիւն է, քանի որ մինչ այժմ, Բաքուից չեն լսել որեւէ յայտարարութիւն գիշտման մասին:

Յատկանշական է նաեւ, որ Հայաստանն արձանագրում է, որ Վիեննայում ու Սանկտ-Պետերբուրգում դարաբաղեան կարգաւորման վերաբերեալ որեւէ պայմանաւորուածութիւն ձեռք չի բերուել:

Այլ կերպ ասած՝ պաշտօնական Երեւանը, վերջապէս, վերջակէտ դրեց «տարածքային գիշտումների», «Հայաստանի նկատմամբ ճնշումների» խօսակցութիւնների վերաբերեալ, յստակ հասկացնելով, որ քանի դեռ Ատրպէյճանը չի խօսում գիշտման մասին՝ Հայաստանից ոեւէ մէկը ոչինչ չպահանջի: Իսկ եթէ պահանջեն՝ որոշողը Ղարաբաղն է:

Եթէ հաշուի առնենք այն հանգամանքը, որ Ատրպէյճանը գերադասում է ոչ թէ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափով «լուծել» Ղարաբաղի խնդիրը, ապա պաշտօնական Երեւանի կողմից ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափի շեշտումը կարելի է ինչ-որ առումով դիւանագիտական ապտակ համարել նաեւ Ռուսաստանի անթաքոյց ձգտումներին ի պատասխան:

«ՀԱՅԵԼԻ»

Հայկական Կողմը Հրաժարուել է Տարածքային Զիջումներից

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ, Ատրպէյճանում ԱՄՆ նախկին դեսպան Մեթիու Բրայզան atlanticcouncil.org կայքում յօդուած է հրատարակել Ղարաբաղեան կարգաւորման նոր միտումների մասին:

Նա ներկայացրել է Ղարաբաղեան կարգաւորման բանակցային գործընթացի դինամիկան, որից ակնյայտ է դառնում, որ 2007 թուականից յետոյ շրջանների թիւը, որոնք պէտք է յանձնէր հայկական կողմը, 7-ից նուազել է 2, իսկ յետոյ՝ 0:

Բրայզան գրում է, որ 2007 թուականին մադրիդեան սկզբունքները նախատեսում էին նախկին ԼՂԻՄ շուրջ 7 շրջանների յանձնում, ընդ որում, Ղարաբաղը դրա դիմաց պէտք է միջանկեալ կարգավիճակ եւ Հայաստանի հետ ցամաքային միջանցք ստանար: Ատրպէյճանը պէտք է վերացնէր շրջափակումը, իսկ սահմանին տեղակայուէին միջազգային խաղաղապահները:

Չնայած այդ համակարգը երբեք պաշտօնապէս չի համաձայնեցուել, 2009 թուականի Յունուարին Իլհամ Ալիեւն ու Սերժ Սարգսեանը լաւատեսութեան առիթ են տուել՝ յայտարարելով, որ այդ առաջարկները կարող են բանակցութիւնների հիմք լինել, գրում է Բրայզան:

Սակայն 2009 թուականին Սարգսեանը փոխել է դիրքորոշումը եւ ընդունել 5 շրջանների վերադարձը: Բրայզան գրում է, որ այս տարիներին վէճը 5 շրջանների շուրջ էր: Հայկական կողմը, հնարաւոր է, ոչ առանց արտաքին աջակցութեան, փորձել է փոխել 5 շրջանների պայմանը կամ էլ դրա դիմաց համապատասպան «գիշտումներ» ստանալ Ատրպէյճանից:

Ինչպէս գրում է Բրայզան, 2016 թուականի Յունիսի 20-ին Փուլիին իր հայ եւ ատրպէյճանցի գործընկերների հետ հանդիպմանն առաջարկել է աստիճանաբար առաջ շարժուել՝ առաջարկելով երկու շրջան յանձնել Ատրպէյճանին տրանզիտը եւ տնտեսական կապերը վերականգնելու դիմաց: Պայմանով, որ միւս բոլոր հարցերը քննարկուելու են յետոյ:

Բրայզան պնդում է, որ Սարգսեանն ու Ալիեւը ողջունել են Փուլիինի առաջարկը՝ չնայած չեն ընդունել այն: Յուլիսի 17-ին, սակայն «հայ ազգայնականների» զինուած խումբը Երեւանում գրաւել է ոստիկանական գոնդը: Գրաւումը յանգեցրել է Հայաստանի դիրքորոշման կոշտացմանը, գրում է Բրայզան:

Չնայած ամերիկացի դիւանագէտը, ով համարում է թուրքական շահերի լոբբիստ, ուղիղ չի նշում, որ «տարածքների յանձնման» հարցը հանուած է օրակարգից, սակայն դինամիկան, որի մասին գրում է Բրայզան, վկայում է հենց այդ մասին:

Յատկանշական է, որ շրջանների հետ միասին «կրճատուել են» նաեւ Ատրպէյճանի «գիշտումները»: Եթէ սկզբում խօսք էր գնում «միջանկեալ կարգավիճակի» եւ հանրաքուէի մասին, ապա վերջին առաջարկը, ինչպէս գրում է Բրայզան, նախատեսում է միայն հաղորդակցութիւնների բացումն Ատրպէյճանի կողմից:

Կարծիք կայ, որ մինչեւ ապրիլեան պատերազմը որոշ թուով

շրջանների վերադարձի դիմաց որպէս Ատրպէյճանի գիշտում էր դիտարկուում նաեւ չյարձակման մասին պայմանագրի ստորագրումը: Ապրիլից յետոյ այդ պայմանը կորցրել է իմաստը:

Անցած 10 տարիներին Ղարաբաղեան հարցով բանակցութիւնները հասել են մի կէտի, որը նախեւառաջ ենթադրում է հրաժարում մադրիդեան սկզբունքներից եւ Ատրպէյճանի «գիշտումների» դիմաց տարածքների վերադարձի պայմանից՝ լինի դա միջանկեալ կարգավիճակի ճանաչում, ուժային լուծումներից հրաժարում թէ հաղորդակցութիւնների բացում:

Ելնելով Բրայզանի ու այլ աղբիւրների տուեալներից, եթէ 10 տարի առաջ կարգավիճակի ճանաչման դիմաց Հայաստանը պատրաստ էր յանձնել 7 շրջան, ապա 2009 թուականին խօսք էր գնում 5 շրջանի մասին՝ ուժային լուծումից հրաժարուելու եւ հաղորդակցութիւնների բացման դիմաց: Ապրիլեան պատերազմից յետոյ խօսք էր գնում 2 շրջանի մասին՝ ապա շրջափակման դիմաց, իսկ Սասնայ ծռերի ապստամբութիւնից յետոյ (իսկ միգրացիոն որոշակի արտաքին երաշխիքներ ստանալուց յետոյ) օրակարգից դուրս է եկել նաեւ այդ հարցը:

Հայաստանը շահագրգռուած է ապաշրջափակմամբ, սակայն հիմա հաղորդակցութեան ուղիների բացումն աւելի շատ պէտք է արտաքին ուժերին: Թող նրանք էլ «վճարեն» Ատրպէյճանին եւ ոչ Ղարաբաղեան շրջաններից: Ղարաբաղը փոխում է սահմանադրութիւնը, եւ շուտով ԼՂՀ տարածքային ամբողջականութիւնն ամրագրուելու է Հիմնական օրէնքով:

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻՒ ՎԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲՀԿ Ղեկավարը Պնդում Է. Ընտրական Վերահսկողական Մեխանիզմներ Կեանքի Չեն Կոչուելու

Ընտրական օրհնագրքում վերահսկողական մեխանիզմներ ներդնելու փոփոխություններ կեանքի չեն կոչուելու, վերջնաժամկետից 10 օր առաջ յայտարարում է «Բարգաւաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Նաիրա Զոհրաբեանը՝ պնդելով, որ գործընթացը տապալել է իշխանությունը: «Իրենք հասկացան, որ 10 մասների ներբեռնումը գրեթէ բացառում է կրկնաքուէարկության որեւէ սողանք եւ իրենց հաշուարկները բերեցին նրան, որ դա ձեռնառու տարբերակ չէ», - «Ազատութեան» հետ զրոյցում կարծիք յայտնեց Զոհրաբեանը:

4+4+4 ձեւաչափով ամիսներ շարունակուած թէ՛ քննարկումներին չեստոյ ընդդիմութեան ու քաղ-հասարակութեան պահանջով ընտրական օրհնագրքում կատարուած փոփոխութիւնները, որոնցով նախատեսուած է ներդնել 10 մասնա-հատքերը ստուգող համակարգ եւ քուէարկութիւնը թոյլատրել միայն նոյնականացման քարտերով, օրհնա-քի ուժ կարող են ստանալ, եթէ մինչեւ Սեպտեմբերի 1-ը յաջողութիւն հասնելով 16 միլիոն եւրօ:

Նաիրա Զոհրաբեանի պնդմամբ, անհրաժեշտ գումարի հարցը լուծուած է դեռեւս նախորդ ամսուանից: ԲՀԿ ղեկավարի խօսքով, որպէս էլեկտրոնային գրանցման համակարգի ներդրման այլընտրանք, այժմ իշխանութեան հետ քննարկում են ընտրողների ցուցակները հրապարակելու տարբերակը:

«Ընտրացուցակների հրապարակումը կարող է ընդունելի

լինել միայն մի դէպքում, եթէ կոնկրետ պատժամիջոցները՝ գեղ-ծարարութեան, ընտրակեղծարարութեան, կեղծ ստորագրելու՝ բացակայելու դէպքում, շատ աւելի յստակ եւ շատ աւելի խիստ պատժուելու են», - ասաց Զոհրաբեանը:

4+4+4 ձեւաչափի քննարկումներին մասնակցած Դանիէլ Իոաննիսեանի համար գործընթացի տապալումն անակնկալ չէր, քաղհասարակութեան ներկայացուցչի պնդմամբ, ազատ ու արդար ընտրութիւնների նպատակ իշխանութիւններն ի սկզբանէ չունէին: Իոաննիսեանի համար անհասկանալի է, թէ ինչպէս է իշխանութիւնը պատրաստուում հրապարակել քուէարկած անձանց ցուցակները, երբ տարիներ շարունակ կտրականապէս մերժում էր այս պահանջը՝ համարելով այն հակահաստատուողական ու միջազգային իրաւունքին հակասող:

Էլեկտրոնային գրանցման համակարգի ներդրումից բացի, Ընտրական օրհնագրքում կատարուած փոփոխութիւններով նախատեսուած է ընտրական տեղամասերը գինել տեսախցիկներով ու ընտրական գործընթացը՝ քուէարկութիւնից մինչեւ հաշուարկ, հեռարձակել ուղիղ եթերով:

Տեսախցիկների հարցը, ըստ իշխող Հանրապետական խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանի, օրակարգից դուրս չէ, վերջնական որոշումը կը կայացուի առաջիկայ շաբաթներին մեկնարկող Ազգային ժողովի աշխատանքին նստաշրջանին:

Ոստիկանութեան Ծոխ Գնումները Շարունակուում Են

«Առաւօտ» թերթը գրում է որ, ապրիլեան պատերազմից յետոյ, Մայիսի 12-ի կառավարութեան նիստին ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանը յանձնարարեց անցնել պետական բիւջէի խնայողութեան առաւել խիստ ռեժիմին: Վարչապետն ասել էր՝ «Թէեւ մենք ունենք հաստատուած բիւջէ, սակայն պէտք է անցնենք խնայողութեան առաւել խիստ ռեժիմի: Պէտք է կրճատենք այն ծախսերը, որոնք չունեն հական ազդեցութիւն իրական արդիւնքի վրայ: Դրանց շրջանակը փոքր չէ՝ գործուողները, ներկայացուցչական ծախսերը, վերանորոգումները, ծառայողական մեքենաները եւ այլն»:

Վարչապետի այս յանձնարարութիւնից մէկ ամիս անց ՀՀ ոստիկանութիւնը բաւականին խոշոր գնումներ է կատարել մէկ անձից գնման ընթացակարգով: Օրինակ՝ Յունիսի 1-ին ոստիկանութիւնը 40 միլիոն դրամի պայմանագիր է կնքել «Թոյոթա Երեւան»-ի հետ՝ աւտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման համար:

Յունիսի 2-ին ոստիկանութեան պետի տեղակալ Լեւոն Երանոսեանը պայմանագիր է կնքել «Մուրան» ՍՊԸ-ի հետ մեքենաների սպասարկման համար եւ դրա համար պետբիւջէից վճարել 750 հազար դրամ, եւ ինչպէս նշուած է պայմանագրում, ոստիկանութեան զօրքերին պատկանող 5 աւտոմե-

քենաների ընթացիկ սպասարկման ծառայութեան համար:

Վարչապետի յանձնարարականից յետոյ ոստիկանութիւնը միայն Յունիսի ամսին աւիատոմսերի՝ այսինքն՝ գործուողներին մեկնելու համար ձեռք բերուած տարբեր ուղղութիւններով աւիատոմսերի համար պետբիւջէից վճարել է 10 միլիոն 619 հազար դրամ: Յունիս ամսուայ միւս խոշոր ծախսը, ըստ մէկ անձից գնումների, մեքենաների ապահովագրութեան համար է կատարուել: Այս ուղղութեամբ ոստիկանութիւնը 20 միլիոն 543 հազար դրամի պայմանագիր է կնքել «Սիլ ինչուրանսի» հետ՝ ճանապարհային ոստիկանութեան 365 ավտոմեքենաների համար: Ճանապարհային ոստիկանութեան 39 ավտոմեքենայ ոստիկանութիւնը 6 միլիոն 904 հազար դրամի կԱՍԿՕ ապահովագրութեան պայմանագիր է կնքել «Նաիրի ինչուրանս»-ի հետ:

ՀՀ ոստիկանութիւնը 13 միլիոն 348 հազար դրամի պայմանագիր է կնքել «Էյլ էս Ընդ էյ» ընկերութեան հետ՝ համակարգչային սերվերներ ձեռք բերելու համար եւ կրկին մէկ անձից գնումների ընթացակարգով: Նոյն ընկերութեան հետ ոստիկանութիւնը նաեւ 9 միլիոն 344 հազար դրամի գնումներ է կատարել լիցենզիաների կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ծառայութիւնների համար:

Արամ Մանուկեան. «Բռնութիւնը Իշխանափոխութեան Համար Մեթոտ Չէ»

Հայ Ազգային Կոնգրէս (ՀԱԿ) կուսակցութեան փոխնախագահ Արամ Մանուկեանի կարծիքով, դարաբաղեան հարցը լուծելու համար Հայաստանը պէտք է փոխդիմումների գնայ: Ընդդիմադիր պատգամաւորի խօսքով, եթէ անցած տարիների ընթացքում բանակցային գործընթացը բարդ է եղել, ապա այժմ դրան գումարուել է նաեւ այն ժամանակի սղութիւնը՝ «Հայաստանին պատասխանելու համար ժամկետ է տրուել»:

«Բոլոր նրանք, ովքեր այս պահին մերժում են, կեղծ հայրենասիրութիւն խաղալով, բանակցութիւնները, որովհետեւ ոչ մի թիզ հողը նշանակում է դուրս գալ բանակցութիւններից, խնդրում եմ ինձ ասէ՛ք՝ ինչպէ՞ս կարող ես բանակցել, եթէ փոխդիմումների մասին չես խօսում», - հարցնում է նա:

Մօտ մէկ ամսուայ լուծութիւնից յետոյ լրագրողների հետ հանդիպմանը ընդդիմադիր ՀԱԿ-ի ներկայացուցիչը նաեւ անդրադարձաւ Ոստիկանութեան ՊՊՄ գնդի տարածքի գրաւման շուրջ ստեղծուած իրավիճակին: Յայտարարեց՝ լուծում էին, փողոց դուրս չէին գալիս, քանի որ բռնութեամբ իշխանափոխութեան տարբերակը չեն ընդունում: Արամ Մանուկեանի խօսքով՝ իրենք լուրջ վտանգ էին տեսնում, որ ստեղծուած վիճակը կարող էր աւելի սրուել՝ վերածուելով պետութեան կորստի կամ քաղաքացիական պատերազմի:

«Զի կարելի անել այնպիսի բան, որը կարող է եղածն էլ կործանել: Եւ մեր լուծութիւնը հենց այդ նպատակն ունէր, որ չսրբեր, չլարեր վիճակը, չտաներ աւելի վատ էսկալացիայի: Բռնութիւնը, ում կողմից էլ այն իրականացուի, իշխանափոխութեան համար մեթոտ չէ, մեր մեթոտը չէ: Բռնութեամբ դու լեգիտիմացնում ես, հնարաւորութիւն ես տալիս ամէն



ՀԱԿ կուսակցութեան փոխնախագահ Արամ Մանուկեան

յաջորդի ժամանակ այդ մեթոտը կիրառել: Որքան էլ նրանք ազնիւ են, որքան էլ հայրենասէր են, որքան էլ իմ ընկերներն են», - յայտարարեց Մանուկեանը:

Պատգամաւորն ասաց, որ իրենք կալանաւորուած «Սասնայ ծռերին» փորձում են աջակցել, փաստաբանների հետ են աշխատում, բայց դա հրապարակաւ չեն անում:

Արամ Մանուկեանը պնդեց՝ իրենք կողմ են իշխանափոխութեանը, բայց չեն ցանկանում, որ դա երկրին վնասի: - «Ես իրաւունք ունէ՞մ ազգա տանել այդպիսի անսթափ, անզգոյշ, ռիսկային քայլերի», - հարցնում է ընդդիմադիր գործիչը:

Մանուկեանը վստահ է, որ փոփոխուած ընտրական օրհնագրքով հնարաւոր է ընտրութիւններում յաջողութեան հասնել: Վենետիկի յանձնաժողովը եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը դրական են գնահատել 4+4+4 ձեւաչափի արդիւնքում ընտրական օրհնագրքում կատարուած փոփոխութիւնները, մինչդեռ աւելի վաղ իշխող Հանրապետականի ներկայացուցիչ Յովհաննէս Սահակեանն «Ազատութեանը» ասել էր, որ ոչ բոլոր փոփոխութիւնները կը հասցնենք կեանքի կոչել:

Արդարադատութեան Նախարարութիւնը Կ'ռաջարկէ Քրեականացնել Ապօրինի Հարստացումը

Հայաստանի Արդարադատութեան նախարարութիւնն կ'առաջարկէ Քրեական օրհնագրքի մէջ կանխատեսել ապօրինի հարստացման յանցակագմը, այլ ձեւով, քրեականացնել ապօրինի հարստացումը: Այս մասին NEWS.am-ի թղթակցիցի հետ ունեցած զրոյցի ընթացքին յայտնեց արդարադատութեան նախարար Արփինէ Յովհաննիսեան՝ անդրադառնալով կառավարութեան Օգոստոս 18-ի նիստի ընթացքին ունեցած ելոյթին:

«Երբ բարձրաստիճան պաշտօնեայի մօտ արձանագրուում է ունեցուածքի կամ ծախսերի զգալի աճ, որն անհամադրելի է օրինական եկամուտների ծաւալի հետ, ապա, հարց է առաջանում՝ որտեղից նրան նման եկամուտ, ինչպէ՞ս է ստացուում, որ նրա կատարած ծախսերի աճը հաւասար չէ նրա օրինական եկամտին: Հենց այս հարցը տալու իրաւունքն էլ վերապահուել է իրաւապահ համակարգին, որը, այդ անհամադրելիութիւնը տեսնելով, կարող է պաշտօնատար անձից պահանջել հիմնաւորել իր ծախսերի կամ գոյքի զգալի աճի եւ դրանց ու իր օրինական եկամուտների միջեւ ան-



Արդարադատութեան Նախարար Արփինէ Յովհաննիսեան

համամասնութեան առկայութիւնը եւ միայն հիմնաւորումների բացակայութեան դէպքում՝ ենթարկել քրեական պատասխանատուութեան,- յայտնեց նախարարը:

Արփինէ Յովհաննիսեանին խօսքով՝ պաշտօնատար անձը քրեական պատասխանատուութեան կ'ենթարկուի նաեւ այն պարագային, եթէ պարզուի, որ պաշտօնատար անձն իր եկամուտներն ու գոյքը ձեւակերպած է իրեն հետ փոխկապակցուած անձին անունով:

ԼՈՒՐԵՐ

Թոմաս Տի Վաալ. «Հայաստան Կ'ապրի Ամենալուրջ Քաղաքական Գնահատմանը Վերջին Ութ Տարուան Ընթացքին»

«Հայաստանի ներկայիս քաղաքական ճգնաժամը, ըստ հուլիսի, դարաբաղեան պատերազմին յաղթած երկու խումբերու հակամարտութիւնն է», - գրած է բրիտանացի յայտնի փորձագէտ Թոմաս Տի Վաալը՝ «Յաղթանակի ծանր ժառանգութիւն»-ը վերնագրի ներքոյ՝ նշելով, որ Հայաստան կ'ապրի ամենալուրջ քաղաքական ճգնաժամը վերջին ութ տարուան ընթացքին:



Բրիտանացի վերլուծաբան Թոմաս Տի Վաալ

Յիշեցնենք, ութ տարի առաջ՝ 1 Մարտ, 2008-ի դէպքերն էին:

Այս տարուան Յուլիսեան ճգնաժամի մասին, երբ «Սասնայ ծուեր» կոչուող խումբի գինուած ծայրայեղականները Երեւանի մէջ գրաւեցին ոստիկանութեան պարեկապահակային ծառայութեան գունդի տարածքը, Թոմաս Տի Վաալ կը գրէ, որ շատերու համար զարմանալի էր հազարաւոր մարդոց աջակցութիւնը գինեալներուն: Ան ճգնաժամի պատճառներէն կը համարէ նաեւ «իշխանութիւններու անընդունակութիւնը քաղաքացիներու վստահութիւնը նուաճելու հարցին մէջ»:

«Իշխանութիւնները չեն յաջողիր լուծել երկրին հիմնական խնդիրները՝ անգործութիւնը, ապականումը, արտագաղթը, պաշտօնեաներու անպատիժ մնալը», - գրած է փորձագէտը:

Անոր բնորոշումով, «Սասնայ ծուեր»-ը արմատական են եւ ծայրայեղականներ են, որոնք անկեղծօրէն կը ձգտին ընկերային արդարութեան, սակայն անոնք խիստ ազգայնական են եւ դէմ են Ատրպէյճանի եւ Թուրքիոյ ցանկութեան յատկապէս՝ Ղարաբաղի շուրջ տարածքներու վերադարձին գծով:

«Ղարաբաղի պատերազմի վեթերաններ կան նաեւ իշխանութեան մէջ, անոնք կը կազմեն Սերժ Սարգսեանի վարչակազմին հիմնական կորիզը, անոնցմէ շատեր, ներառեալ ծագումով զարաբաղցի Սերժ Սարգսեան, իշխանութեան գլուխ անցան յաղթանակի ակիբին վրայ եւ պատրաստ են իրենց դիրքորոշումները պաշտպանել ամէն գնով», - գրած է վերլուծաբանը:

Փորձագէտին խօսքով՝ զարաբաղեան պատերազմին յաղթանակը Հայաստանի մէջ գորացուց համազգեստով մարդոց դիրքերը: «Անոնք նախ իշխանութիւնը վերցուցին Ղարաբաղի մէջ, ապա Հայաստանի մէջ 1998-ին զարաբաղցիներու ծայրայեղական խմբաւորումները եւ պատերազմի վեթերանները չեղաշրջում մը կազմակերպեցին՝ պաշտօնէն հեռացնելով երկրի նախագահ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը: Քոչարեանը դարձաւ նախագահ, իսկ Սարգսեան՝ անոր սերտ գինակիցը:

Թոմաս Տի Վաալ՝ շարունակելով գրած է - «Հիմնական խնդիրը այստեղ այն է, որ Հայաստանի մէջ, եթէ անգամ Սարգսեանի իշխանութիւնը ոչ իբրեւ օրինական կ'ընկալուի, անոր որեւէ այլ ընտրանք դեռ եւս չի նշմարուիր»:

Փորձագէտին բնորոշումով, Ղարաբաղի չլուծուած հակամարտութիւնը նախկինին պէս ծանր բեռի պէս կը ճնշէ Հայաստանի վրայ: «Իսկ ապրիլեան քառօրեայ պատերազմէն ետք, Սարգսեան եւ իր խումբը հասկցած են, որ իրենց

անհրաժեշտ է գոնէ ձեւացնել, թէ Հայաստան պատրաստ է խելամիտ գիշումներու՝ օկուպացուած տարածքներու հարցին մէջ: Հակառակ պարագային, մօտիկ ապագային, Հայաստանին պատերազմ կը սպառնայ Ատրպէյճանի հետ, որու իշխանութիւնները շատ կոշտ ձեւով տրամադրուած են», - գրած է Թոմաս Տի Վաալ:

Նոյնիսկ եթէ յաջողի պատերազմէն խուսափել, ըստ փորձագէտին, ներկայիս իրավիճակի պահանջան պարագային, Հայաստան կրնայ երկար մնալ միջազգային մասնակի մեկուսացման տակ:

«Ճիշդ այդ պատճառով Սարգսեան կը շարունակէ խաղաղ համաձայնութեան բանակցութիւնները, հակառակ անոր որ անիկա քիչ կը տարբերի այն տարբերակէն, որու պատճառով Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ չեղաշրջում մը իրականացաւ եւ հեռանաբար այդ պատճառով է, որ վերջին ճգնաժամի ընթացքին Լեւոն Տէր-Պետրոսեան անուղղակի պաշտպանեց Սարգսեանը՝ կոչ ընելով կեդրոնական արտաքին սպառնալիքներու եւ զարաբաղեան հակամարտութեան կարգաւորման վրայ», - գրած է Թոմաս Տի Վաալ:

«Խաղաղութեան միակ ճամբան, բարդ փոխգիշումն է, այդ ծիրին մէջ՝ հայկական կողմի համաձայնութիւնը՝ ետ յանձնելու Ղարաբաղի շուրջ գրաւուած ատրպէյճանական տարածքները, Լեւոնային Ղարաբաղի կարգավիճակի հարցին մէջ՝ Ատրպէյճանի փոխգիշման դիմաց», - գրած է փորձագէտը:

«Յուլիսի ճգնաժամը շատերու մօտ տպաւորութիւն ստեղծեց, թէ ժողովրդավարական քաղաքականութիւնը սպառած է գինք, եւ ուժային մեթոտներու կիրառումը լիովին ընդունելի է: Այս ճգնաժամը եւս մէկ անգամ ցոյց տուաւ, որ Հայաստանի իշխանութիւնները շատ քիչ ժողովրդականութիւն ունին, իսկ կազմակերպուած, համակարգուած ընդդիմութիւն երկրի մէջ կը բացակայի: Այս ամէնը նոր փայտ մը խրեց առանց այդ ալ խաղաղ գործընթացի անարդիւնաւէտ գործին մէջ: Հայաստանը դժուար թէ կարողանայ ինքնուրոյն դուրս գալ այս փակուղիէն: Ռուսաստանը՝ իրեն հիմնական դաշնակիցը, կը գերադասէ գործել պարտադրանքի մեթոտներով: Ներքին անհանգստութիւնները եւ արտաքին անորոշութիւնը յաղթահարելու համար, Հայաստանին պէտք է միջազգային գործընկերներու եւ հայկական սփիւռքի իրապաշտական մասի աջակցութիւնը», - կը գրէ Թոմաս Տի Վաալը:

Վրաստանի Մէջ Եօթ Մարդ Ձերբակալուած Է՝ Ռուսաստան-Հայաստան Գազատարը Պայթեցնել Փորձելու Կասկածով



«ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Ռուսաստան-Հայաստան գազատարը պայթեցնել փորձելու կասկածանքով վրաստանին մէջ հինգ մարդ ձերբակալուած է: Ռուսական աղբիւրը մայրամասներ չի հաղորդեր: Սակայն, «Կրուգիա Օնլայն» գործակալութիւնը, վկայակոչելով վրաստանի ազգային անվտանգութեան ծառայութիւնը, կը հաղորդէ, որ ահաբեկչութիւն կազմակերպելու կասկածանքով ձերբակալուած է եօթ մարդ, հինգը՝ վրաստանի քաղաքացի: Անոնք կը կասկածուին Հայաստանն ու Ռուսաստանը իրար կապող «Սակուրամօ» գազատարը պայթեցնել փորձելու մէջ: Աղբիւրը նաեւ կը նշէ,

որ ձերբակալուածներուն մաս կը կազմէ ոստիկանութեան պարեկային ծառայութեան աշխատող մը, որ կը մեղադրուի ահաբեկչական խումբին աջակցելու մէջ:

Ըստ աղբիւրին, Ժինվալի-Շատիլի մայրուղիին մօտ գտնուող անտառային հատուածէն յայտնաբերուած է 4 միւսուոր 200 կրամանոց «Թրոթիլ» տեսակի պայթուցիկ նիւթ, 5 պայթուցիչ սարք (տեթոնաթոր): Խումբի անդամներուն ինքնաշարժերուն մէջ յայտնաբերուած է գինամթերք, իսկ անդամներէն մէկուն տունէն առգրաւուած է համակարգչային քարտ, ուր նշուած են պայթիւններ իրականացնելու վայրերը:

Վալերի Փերմիաքովի Դէմ Ցկեանս Ազատագրկման Վճիռ

Կիւմրիի ՌԴ 102-րդ ռազմական յանձնարարի մէջ, Շիրակի մարզի ընդհանուր իրաւասութեան դատարանը հրապարակեց 2015 Յունուար 12-ին Կիւմրիի մէջ Աւետիսեան ընտանիքի 7 անդամներու սպանութեան մէջ մեղադրուող Վալերի Փէրմիաքովի դատավճիռը:

Ըստ «Ազատութիւն» ռատիոկայանի, դատաւոր Յարութիւն Մովսիսեան հրապարակեց, որ դատարանը՝ համադրելով ձեռք բերուած ապացույցները, անոնց համակցութեամբ հաստատուած կը համարէր, որ ան կատարած է իրեն առաջադրուած մեղադրանքներով նախատեսուած արարքները:

Եւրախորհրդարանի Պատգամաւոր Ֆրանկ Էնգել.- Արցախը Ատրպէյճանի Մաս Երբեք Չի Լինի

Արցախը Ատրպէյճանի մաս չի հանդիսանում եւ երբեք չի լինի: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտնել է Եւրախորհրդարանի պատգամաւոր Ֆրանկ Էնգելը:

Նրա խօսքով, անհրաժեշտ է վերջ տալ խնդրի գործելուն. «Եթէ դու ազդեալ պատերազմ ես սկսում եւ պարտութիւն ես կրում, չի կարելի վերադառնալ նրան, ինչ կար մինչ այդ: Հակառակ դէպքում կալինինգրադը մինչեւ հիմա Քիոնիկսերը կը կոչուէր», - ընդգծել է Ֆրանկ Էնգելը:

Անդրադառնալով այն հարցին, թէ երբ վերջապէս Եւրոպական խորհրդարանը հանդէս կը գայ յստակ եւ հասցեական յայտարարութեամբ, որը կը դատապարտի ատրպէյճանական զինուած ուժերի բռնութեան պարբերական գործողութիւնները Լեւոնային Ղարաբա-

ղի Հանրապետութեան խաղաղ բնակչութեան նկատմամբ, Ֆրանկ Էնգելն ասել է. «Եւրոպական խորհրդարանը յստակ դիրքորոշում է յայտնել ընթացիկ տարուայ Ապրիլին, բայց խորհրդարանականները մեծամասնութիւնը դեռ պէտք է առերեսուի փաստերին»:

Յիշեցնենք, որ Ապրիլի 12-ին՝ Եւրոպական խորհրդարանի լիագումար նիստին զարաբաղեան խնդրի վերաբերեալ քննարկումներ են տեղի ունեցել: Շատ եւրոպացի պատգամաւորներ (Ֆրանսայից, Չեխիայից, Լեհաստանից, Կիպրոսից, այդ թւում նաեւ՝ իւքսեմպուրգի խորհրդարանական Ֆրանկ Էնգելը), երկար տարիների ընթացքում առաջին անգամ կոչ են արել ճանաչել Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը եւ պատժամիջոցներ կիրառել Պաքուի վարչակարգի նկատմամբ:

Սելինա Տողան Մտահոգ է Պոլսոյ Փոքրամասնութիւններու Դէմ Եղած Ցեղապաշտական Դրսելորումներով

Վերջին շրջանին, Թուրքիոյ մէջ փոքրամասնութիւններուն դէմ ցեղապաշտական դրսելորումներուն եւ քայլերուն առաջը առնելու նպատակով, ընդդիմադիր Հանրապետական Ժողովրդային կուսակցութեան երկու երեսփոխաններ հայազգի Սելինա Տողան եւ Զէյնեպ Ալթըօք միասնաբար նամակ մը յղած են արդարադատութեան նախարար Պեքիր Պոզտադին:



ՉԺԿ Երեսփոխան Սելինա Տողան

Նամակին մէջ երեսփոխանները դիտել կու տան, որ այս շրջանին, երբ այլախոհ կամ տարբեր դիրքորոշումներ ունեցող անձեր բանտ կ'ուղարկուին, երբ նախագահին ուղղեալ քննադատութիւններու համար դատեր կը բացուին, մաղթելի է ու անհրաժեշտութիւն է, որ անպայման որոշումներ ընդունուին՝ պատժելու համար այն անձերը կամ շրջանակները, որոնք ամբողջ հաւաքականութիւն մը կը նուաստացնեն ու սպառնալիքներով լեցուն յայտարարութիւններ կը հրատարակեն անոր հասցէին:

Խնդրոյ առարկայ նուաստացումներուն եւ սպառնալիքներուն վերջին օրինակները եղած են Ս. Նաչ դարեվանքի պատերուն վրայ գրուած սպառնական գրութիւնները, ինչպէս նաեւ՝ Յուլիս 15ի զինուորական ձախող հարուածէն ետք կրօնական փոքրամասնութիւններու դէմ ուղղուած հրապարակումներն ու յայտարարութիւնները:

Երեսփոխաններուն յղած նամակին մէջ գրուած է. «Ֆեթհուլլահ Կիւլէնի մասին գրուեցաւ, որ հայկական ծագում ունի, ու այդ պնդումներէն ետք, հայ փոքրամասնութիւնը որպէս թիրախ ցոյց տրուեցաւ՝ ճամբայ բանալով այլատեսացութեան ու թշնամութեան: Կարգ մը շրջանակներ այդ պնդումներէն մեկնելով՝ սկսան սպառնալիքներ ուղղելու ոչ-իսլամներու: Սպառնալիքները հետզհետէ աւելի

սաստկացան՝ գետին պատրաստելով վտանգաւոր զարգացումներու: Պնդուեցաւ, որ Կիւլէն քրիստոնեայ աշխարհին հետ կապեր ունի, տեսակցած է պապին հետ եւ կ'աղօթէ հրեաներուն նման: Այսպիսի յերկրածոյ պնդումներ խիստ վտանգաւոր են ու մտահոգութիւն կը պատճառեն, նկատի ունենալով մանաւանդ անցեալի ցաւալի փորձութիւնները: Ընկերային ցանցերու մէջ հետզհետէ սաստկացող սպառնալիքները իրենց վերջին դրսելորումը գտան հայկական վարժարանի մը պատերուն վրայ գրուած «ՏանՂանք հայերուն. ձեզի Քիւրձաթի քէնը բերած եմ» խօսքերով:

Փոքրամասնութիւնները, զինուորական հարուածի փորձէն ետք, իրենց հաւատարմութիւնն ու գորակցութիւնը ցոյց տուին իշխանութիւններուն: Նաեւ եկեղեցիներու եւ սինակոկներու մէջ աղօթեցին նահատակներու հոգիներուն համար: Բայց այսպիսի վտանգաւոր զարգացումներ վնաս կը պատճառեն հասարակաց հաշտութեան: Կը յուսանք, որ արդարադատութեան նախարարը անպայման մօտիկ հետաքրքրութիւն ցոյց կու տայ այս նիւթին»:

Լուրի աղբիւր՝ «Ժամանակ»

Գերմանիոյ Ներքին Գործոց Նախարարու Քիւն. Թուրքիան Դարձած Է Իսլամիստներու Կեդրոն



Գերմանիոյ ձախերը դաշնային կառավարութեան կը յորդորեն գործ չունենալ «ահաբեկիչներու կնքահայր էրտողանին հետ»: Անգարայի կողմ արձագանքը չէ ուշացած:

Գերմանիոյ խոշորագոյն քաղաքական ուժերէն մէկը՝ փոխդեսպան Զիլմար Գաբրիէլի ղեկավարած Սոցիալ դեմոկրատական կուսակցութիւնը երկրի ներքին գործերու նախարարութեան կը պահանջէ Պոլսոյ տեսակին ներկայացնել զաղտնի գեկոյցը, որուն համաձայն, Թուրքիան վերջին տարիներուն դարձած է տարածաշրջանին մէջ գործող իսլամիստներու կեդրոնը:

Նախօրէին Գերմանիոյ հանրային հեռարձակողը՝ ARD-ն հատուածներ հրապարակած է զաղտնի այդ փաստաթուղթէն, ուր, մասնաւորապէս, ըսուած է՝ «Թուրքիան տարիներ շարունակ աշխատած ու աջակցած է Մերձար Արեւելքի զինեալներուն: Նախագահ էրտողանին ու անոր կուսակցութեան յայտարարութիւնները՝ որոնցմով աջակցութիւն կը յայտնէ Եգիպտոսի «Մահմեդական եղբայրներուն», «Համաս»-ին կամ Սուրիոյ իսլամիստներուն, կը վկայեն այդ ուժերուն հետ գաղափարական ընդհանրութիւններուն մասին»:

Զեկոյցին առաջինը ծանօթացած Գերմանիոյ ձախերը կոչ կ'ընեն դաշնային կառավարութեան՝ գործ չունենալ «ահաբեկիչներու կնքահայր էրտողանին հետ»: Գերմանիոյ ձախերու արտաքին յարաբերութիւններու գծով ներկայացուցիչ Սեվիմ Տաղտեյն գերմանական պատկերասփիւռի կայաններէն մէկուն հետ ունեցած գրոցի ընթացքին յայտարարած է՝ «Եթէ միջազգային դաշնակցային միութեան անդամ Թուրքիան գաղտնի տեղեկութիւններ փոխանցէ հահաբեկչութեան գծով իր եղբայրներուն՝ իսլամիստներուն ու զինեալներուն, մենք հակա խնդիրներու առջեւ կը կանգնինք»: Ան աւելցուցած է՝ «Ներքին գործերու նախարարութեան այդ գեկոյցին մէջ զարմանալի ոչինչ կայ, ըսուած է այն, ինչի մասին շուտով յայտնի էր: Պէտք էր ընդամենը հետեւիլ միջազգային լրատուական միջոցներու հրապարակումներուն մէջ»:

Գերմանիոյ արտաքին գործերու նախարարութիւնը հրաժարած է մեկնաբանել գեկոյցը: Անգարան, իր հերթին, շատ կոշտ արձագանքած է այդ մէկուն, այն որակելով «հիւանդ երեւակայութեան արդիւնք»:

«Այդ մեղադրանքներով գերմանական լրատուամիջոցը կը փորձէ վնասել Թուրքիային՝ թիրախաւորելով մեր նախագահին ու կառավարութեան», - յայտարարած է Թուրքիոյ ԱԳ նախարարութիւնը: Արեւմտեան լրատուամիջոցները կը փաստեն՝ Անգարայի ու Պոլսոյ միջեւ յարաբերութիւններն ակնյայտօրէն սրուած են նախ գերմանական լրատուամիջոցներէն մէկը եթեր հեռարձակեց էրտողանին հասցէին վիրաւորական արտայայտութիւններ պարունակող երգիծական հաղորդում մը, ապա՝ Պոլսոյ տեսիլակը գրեթէ միաձայն ճանչցաւ 1915 թուականի հայերու ցեղասպանութիւնը: Անկէ ետք արդէն պաշտօնական Անգարան արգիլեց գերմանացի օրէնսդիրներու մուտքը ինձիրլքի աւիաբազան, ուր 250 գերմանացի զինուոր կը ծառայէ:

ԳԴՀ ներքին գործերու նախարարութեան վերջին գեկոյցին մասնակի գաղտնագրութեամբ ետք Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնն եւս իր հերթին Պերլինին մեղադրած է «քիւրտահաբեկիչներուն աջակցելու մէջ»:

«Ակնյայտ է, որ այդ մեղադրանքներու ետեւը կանգնած են գերմանական քաղաքական շրջանակները, որոնք յայտնի են հահաբեկչութեան դէմ պայքարին իրենց երկակի չափանիշներով», - յայտարարած է պաշտօնական Անգարան, ընդգծելով՝ «Ըլլալով հահաբեկչութեան ցանկացած դրսելորումն դէմ անկեղծ պայքար մղող երկիր՝ Թուրքիան կ'ակնկալէ նոյն դիրքորոշումը նաեւ իր գործընկերներէն»:

«Թրանսփարընսի Ինթըրնեշնըլի» Համաձայն

Շարունակուած էջ 1-էն

պետական գնումներուն մասնակցող ընկերութիւնները պէտք է բացառապէս իրենց իրական սեփականատէրերը եւ պետական գնումներու գործընթացին մասնակցիլ ցանկացող որեւէ կազմակերպութիւն, մասնակցելու ժամանակ պէտք է ներկայացնէ իր իսկական սեփականատէրերու

անունները:

Լրատուամիջոցներուն մէջ բազմաթիւ են հրապարակումները, ըստ որոնց, բարձրաստիճան պաշտօնեաները իրենց իսկ գլխաւորած պետական գերատեսչութիւններուն կողմէ տրամադրուող գնումները կը կատարեն իրենց ազգականներուն, նոյնիսկ ընտանիքի անդամներուն պատկանող ընկերութիւններէն:

Թուրքիա իր Քաղաքացիները կը Զգուշացնէ Զմասնակցիլ Ղարաբաղի 25 Ամեակին Նուիրուած Համագումարին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հիմնադրութեան 25 ամեակին նուիրուած համագումարը Թուրքիոյ Կրթութեան նախարարութեան արգելքով ծանօթ դարձաւ պոլսահայութեան:

Նախարարութիւնը 10 Օգոստոսին հրապարակած շրջաբերականով Թուրքիոյ քաղաքացիները կը զգուշացնէր 15-18 Սեպտեմբեր թուականներուն կայանալիք համագումարին չմասնակցելու մասին:

Շրջաբերականին մէջ գրուած է հետեւեալը. «Լսումներու համաձայն Հայաստանի Հանրապետութեան Երիտասարդութեան եւ Մարմնամարզութեան Նախարարութիւնը Ատրպէյճանի գրաւեալ տարածքի՝ Լեռնային Ղարաբաղի մէջ կը կազմակերպէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հիմնադրութեան 25 ամեակը խորագրեալ միջազգային համագումար մը: Հաւանական հրաւերի մը պարագային կը զգուշացնենք մասնակցութեանէն հրաժարելու մասին»:

Համագումարը կազմակերպող Ղարաբաղի Երիտասարդ ակադեմիականներու եւ մասնագէտներու միութեան հիմնադիր Աւետիք Յարութիւնեան այս մասին «Ակոս»ին



փոխանցեց հետեւեալ տեղեկութիւնը. «Հիմնադրութեան 25 ամեակին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հատած ճանապարհը, յաջողութիւնները եւ անյաջողութիւնները քննարկելու համար պիտի մէկտեղուինք: Այս առթիւ Ղարաբաղի երիտասարդ ակադեմիականները այլ երկիրներէն եկած պաշտօնակիցներու հետ պիտի ծանօթանան եւ կարծիքներ պիտի փոխանակեն: Հինգ երկիրներէ մասնակիցներ ունինք, որոնց մէջ Թուրքիայից չկան: Բայց եթէ ցանկութիւն ըլլայ մենք պատրաստ ենք զիրենք ընդունելու»:

«Ակոս»

ՅՈԳՆԱԾ ԵՆՔ ԱՅՍՔԱՆ ՅՈԳՆԵԼԵՆ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Պետական իշխանությունները աշխարհի ամեն կողմ սովորություններն դարձուցած են ահաբեկիչ (terrorist) կոչել բոլոր անոնք, որոնք անյուսալի եւ անհավասար պայքար կը մղեն՝ զենք բարձրացնելով իշխանատերի ահին ու սարսափին դէմ: Հայաստանի իշխանություններն ալ հետեւեցան այդ սովորություններին, երբ ահաբեկիչ կոչեցին «Սասնայ Մուկեր» խմբակի գլխավորները, որոնք խորհրդարանի փողոցի ոստիկանատունը գրավելով՝ ժողովրդային ապստամբություններ մեր փորձեցին ցանել Հայաստանի մէջ: Թէեւ ապստամբություններն չյառաջացուց այդ խմբակին խնդրաշարժը արարքը, սակայն բաւական եղաւ, որ Հայաստանի մէջ Արմատական փոփոխություններն պետք զգացնէր Սերժ Սարգսեանին (ըստ իր ըրած յայտարարություններ) եւ Սփիւռքի մէջ ալ Սերժ Սարգսեանին հետ մեղադրանքի մէջ գտնուող մարդիկը կամ կուսակցությունները, միություններն ու կազմակերպությունները շփոթություններ մատնէր եւ ճիշդ դիրքորոշուելու կամ կողմ ճշդելու անհանգստություններն պատճառէր անոնց:

«Ինչու՞ Սփիւռքը կը լռէ» ըսողներ եւ գրողներ շատ եղան Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ ու զայրոյթի ձայները անոնց վախճամ, որ վերջիվերջոյ, ինչպէս միշտ, ապարդիւն մնան: Բարեմիտ հայրերիներ ալ եղան, որոնք ներքի չգտան զինեալ պայքար մղելու գաղափարը, ըսելով՝ թէ հայը հայու արիւն պէտք է թափէ եւ թէ որեւէ բարեփոխություններն պէտք է ըլլայ ժողովրդային կամ (evolution) եւ ոչ՝ յեղափոխություններ (revolution): Բարեշրջումը սակայն ինչպէ՞ս կարելի կը դառնայ երկրի մը մէջ, ուր քուէատուներն մէջ նախապէս որոշուած անուններ միայն կը դրուին եւ ուր այդ անուններու տէրերուն ի նպաստ օրէնքներ կը մշակուին ու կը գործադրուին:

Մեր ժամանակէն գրեթէ քսանչորս դարեր առաջ յոյն մեծ փիլիսոփայ Պղատոնը (Ք.Ա. 427-347) ըսած էր. «Մի՛ ակնկալէք արդարություն հոն՝ ուր ոյժն է ճիշդը» (do not expect justice where might is right): Հին օրերէն մինչեւ այսօր արդարությունն աղանին բանտարկուած կը մնայ գորաւորի ափին կամ վանդակին մէջ: Բացառություններ չի կրնար կազմել Հայաստանը, ուր գորաւորը Արցախի խրամատներուն մէջ կ'ուզէ տեսնել ժողովուրդի յեղափոխական ոգին եւ Երեւանի մէջ կ'ուզէ սպաննել ընկերային արդարություն պահանջող այդ նոյն ոգին:

Յուսահատություններն եւ յուսալքություններն շունչ կայ դժբախտաբար մեր ժողովուրդի մեծամասնություններն մօտ, որ պէտք է խոստովանիլ, թէ ան կը բխի իրապաշտությունէ մը, որ նկատի կ'առնէ

մեր ողբալի անցեալը (պետականությունների չգոյություններն եւ ցեղասպանություններն) եւ մեր աշխարհագրական դիրքն ու սահմանափակ կարելիությունները:

Յեղափոխությունները կարծէք կը պատկանին անցեալին եւ Հայաստանի նման քաղաքական իրավիճակ ունեցող արաբական երկիրներուն մէջ ալ տեսանք, թէ ինչ աւերներ ու աղէտներ գործեցին «Արաբական Գարուն» կոչուած ժողովրդային պոռթկումներն ու շարժումները: Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր ամէն ինչ գորաւորին գրչով կը գրուի եւ կը բացատրուի: Որքան ճիշդ է խօսքը այն մարդասէրին, որ ըսած է, թէ «այսօր «ահաբեկչություն»ը (terrorism) այն դարբնուած կամ հնարուած անուանումն է, որ կը սահմանէ կամ կը նկարագրէ վայրագ արարքները տկար ու աղքատ կողմերուն, որոնք դէմ հնարուած ու դարբնուած «պատերազմ ընդդէմ ահաբեկչություն» (war against terrorism) որակումը կամ անուանումը կը սահմանէ կամ կը նկարագրէ վայրագ արարքները գորաւոր ու հարուստ կողմերուն. եւ երբ ամենավսեմ ժողովրդավար իշխանությունները կը գործեն ամէն տեսակի ահաբեկչություններ ընդդէմ մարդկություններն գործածելով սահմանումներ, ինչպէս՝ «ազատություն», «արդարություն» եւ «բախում քաղաքակրթություն» միջեւ», արդարացիութեամբ համար իրենց ոճիրները, մենք՝ կորուսեալներն ու զոհերը այդպիսի ահաբեկչութեանց, մնացած ենք միակ արարածները ըսելու աշխարհին, թէ անմեղին դէմ կատարուած ոճիրին մէջ չկայ տարբերություններ քաղաքակրթականություններն (civilized killing) եւ վայրագ սպանություններն (barbaric killing) միջեւ, այլ կայ միայն անմեղի դէմ կատարուած ոճրային սպանություններ (criminal killing)»:

Ինչ ըսել կ'ուզուի այստեղ: Կ'ուզեմ ըսել, թէ պէտք է հաւատք ընծայել կամ խաբուիլ Հայ թէ օտար գորաւորի անուշ խօսքերէն, որ «արդարություն» եւ «ազատություն» կամ ալ «հայրենասիրություն» ու «անկախություն» կ'ուզէ ծախել մեզի՝ աթուր համայնութեան կամ կառչելու նպատակով: Աշխարհ յոգնած է այսքան խաբուելէն եւ յոգնած է այսքան յոգնելէն:

ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ.

«ՌՈՒՍԱՍՏԱՆ Կ'ՈՒԶԷ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԱՌՆԵԼ ԶԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ»

Համաշխարհայնացումի եւ տարածաշրջանային համագործակցությունների վերլուծական կեդրոնի ղեկավար, Ստեփան Գրիգորեանի խօսքով՝ չորսօրեայ պատերազմէն ետք ակնյայտ կ'երեւի, որ Ռուսաստանի քաղաքականությունը «միտուած է անոր, որ Հայաստանը լուրջ զիջումներ կատարէ»:

«Գլխաւոր փաստը՝ Ռուսաստանն ամէն ինչ անում է, որ Հայաստանը զիջումների գնայ, որ Ազրպէյճանին Ռուսաստանը բերի դէպի ռուսական դաշտ, դէպի Եւրասիական տնտեսական միություններ, ու այստեղ է, որ Ռուսաստանի այս քաղաքականությունը հանդիպեց լրջագոյն դիմադրություններ՝ ոչ թէ Հայաստանի իշխանությունն է դիմադրել, ինչը պէտք է աներ, այլ Հայաստանի հասարակությունը եւ բանակը՝ Ղարաբաղի եւ Հայաստանի բանակը», - յայտնեց Գրիգորեան:

Վերլուծաբանին զնահատմամբ, Ռուսաստան կ'ուզէ նաեւ իր տիրապետություններն տակ վերցնել հայկական բանակը: «Պարզ է՝ մի օրում դա անհնար է, բայց այս ձեւի քայլերը դրան են միտուած», - «Ազատություն» հետ ունեցած զրոյցի ընթացքին յայտնեց Գրիգորեան:

Երէկ Երեւանի մէջ կայացած Հայաստանի եւ Ռուսաստանի պաշտպանությունների նախարարներ՝ Սէյրան Օհանեանի եւ Սերկէյ Շոյգուի բանակցություններէն ետք, Ռուսաստանի պաշտպանությունների փոխնախարար Անատոլի Անտոնովը յայտարարած է, որ Հայաստանն ու Ռուսաստանը կը պատրաստուին միացեալ գորախումբի ստեղծման մասին համաձայնագիր կնքել՝ նշելով, որ համաձայնագրի ստորագրման նախապատրաստումը կը գտնուի եզրափակիչ փուլի մէջ: «Համաձայնագրի իրականացումը թոյլ կը տայ յստակօրէն կարգաւորել այդ ոլորտում համատեղ գործողությունները եւ խմբաւորմանը ժամանակին ապահովել անհրաժեշտ տեղեկատուութեամբ», - յայտնած է Անտոնով:

Աւելի վաղ, նշեց, որ Հայաստանն ու Ռուսաստանը հակաօդային պաշտպանությունների (ՀՕՊ) միաւորուած համակարգ ստեղծելու մասին համաձայնագիր ստորագրած են:

«Հակաօդային կապը համատեղ, որ ստեղծեցին, ակնյայտ է, թէ




ինչի մասին է խօսքը՝ այսօր ինչքան էլ մեր պաշտօնեաները չհաւաստիացնեն, այսօր ուշալ հակաօդային կապը, այդ թւում՝ նաեւ Հայաստանի, հիմա Ռուսաստանի ձեռքերում է», - յայտնեց Գրիգորեան՝ ընդգծելով, որ ռուս-հայկական երկկողմ համատեղ ուժեր ստեղծելու քայլերը հայկական բանակը չէզոքացնելու նպատակ ունին:


«Ակնյայտ է, որ այս վերջին օրերի ցանկություններ՝ յանձնել հայկական հողերը Ազրպէյճանին, որ Ազրպէյճանն աւելի մօտ լինի Ռուսաստանին, ինչ խոչընդոտի է հանդիպում, առաջին հերթին, որ այնուամենայնիւ ինչքան էլ մենք շատ սուվերենություններն չտուեցինք տարբեր ոլորտներում վերջին ժամանակներում Ռուսաստանին, այնուամենայնիւ դեռ բանակը մերն է, ու դեռ հասարակություններն մէջ Հայաստանում կան զգալի թուով մարդիկ, ակտիւ խմբեր, որոնք դրան դիմադրում են, ուրեմն այս քայլը՝ երկկողմ համատեղ ուժեր ստեղծելը, ես չեմ խօսում ՀԱՊԿ-ի շրջանակներում, այլ ռուս-հայկական, նպատակ ունի նաեւ մեր բանակը չէզոքացնելու, ու եթէ դուք նկատել էք վերջին ժամանակներս նաեւ Հայաստանում գնում է բոմփանիա, այդ ակտիւ հասարակական գործիչների նկատմամբ, ակտիւ փորձագետների նկատմամբ, այն մարդկանց նկատմամբ, ովքեր պայքարում են Ղարաբաղի համար», - յայտնեց Գրիգորեան՝ շարունակելով. - «Մենակ մի բան մնաց ճշդելու՝ իշխանությունների դերը Հայաստանի էր խաղերի մէջ՝ իրենք ակտիւ են մասնակցում, թէ՛ ինչ, իրենք չէ՞ն հասկանում, որ հենց այդ ուղղություններն են զարգացումները գնում»:

**Ձեր Ծանուցումները
Վստահեցեք
«Մասիս»
Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680



ՄԳՀԿ
Արեւմտեան Ամերիկայի Ծրջան



ԿԱՅԾ

Երիտասարդական Միութեան նախաձեռնութեամբ՝
Դասախօսութեան Երեկոյ

«Ազատ Անկախ Հայ - Ազատ Անկախ Հայաստան»

Կը Չեկուցէ՝


Յարույթ Տէր Դաւիթեան

Հինգշաբթի 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2016, Երեկոյեան ժամը 8:00-ին
ՀԿԲՄ Կարօ Սողանալեան Մրահէն ներս:

1060 N. Allen Avenue
Pasadena, CA 91104

Հիւրասիրութիւն
Մուտքը Ազատ

Միխայիլ Գորբաչով՝ Պաշտօնիս Դամար Զեմ Ափսոսար, Կ'ափսոսամ, Որ Փլուզուած Է Խորհրդային Միութիւնը



Հայաստանի մէջ հարցուածնե-րու շուրջ 71 տոկոսը կը համարէ, որ կեանքի որակը խորհրդային շրջա-նից անելի բարձր էր: Այդ ցուցանիշով երկրորդ հորիզոնականին Ազրպէյ-ճանն է՝ 69 տոկոսով:

Այս օրերուն Ռուսաստանի մէջ, նաեւ ԽՍՀՄ միւս նախկին հանրա-պետութիւններուն մէջ, կը վերջի-շեն 25 տարի առաջ տեղի ունեցած յեղաշրջումը եւ անոր յաջորդած պատմական իրադարձութիւնը՝ Խորհրդային կայսրութեան փլու-զումը:

Ռուսական շարք մը ընկերա-բանական կազմակերպութիւններ, անոնց կարգին՝ Համառուսաստան-եան հասարակական կարծիքի ու-սումնասիրման կեդրոնը, հարցազ-րոյցներ կատարած են յետխորհր-դային տարածքին մէջ, որուն ար-դիւնքով պարզած են՝ յետխորհր-դային 9 երկրներու մէջ 35-է բարձր տարիք ունեցող մարդոց մեծ մասի կարծիքով, Խորհրդային Միութեան մէջ կեանքի որակն անելի բարձր էր:

Ամենաբարձր ցուցանիշն այդ առումով արձանագրուած է Հա-յաստանի մէջ, ուր հարցուածնե-րուն շուրջ 71 տոկոսն յայտնած է, թէ ի համեմատ անկախութեան տարիներուն, կեանքի որակը խորհրդային շրջանին անելի բարձր էր: Երկրորդ հորիզոնականին Ազր-պէյճանն է՝ 69 տոկոսով: Ուշագրաւ է հանգամանքը, որ Խորհրդային Միութեան վարկանիշը բաւակա-նին բարձր է Հայաստանի եւ Ղրղզստանի երիտասարդութեան շրջանակէն ներս: Ի տարբերու-թիւն միւս յետխորհրդային երկր-ներուն՝ Հայաստանի եւ Ղրղզս-տանի մէջ հարցուած երիտասարդ-ներուն մօտ 50 տոկոսն յայտնած է, որ ԽՍՀՄ իշխանութեան շրջանին

կեանքն անելի բարձր էր, քան այսօր: Եւ դա այն պարագային, երբ հարցուածներն այդ տարիներուն նոյնիսկ տակաւին չէին ծնած:

1991 թուականի Օգոստոս 19ը պատմութեան մէջ արձանագրուած է, որպէս օգոստոսեան պոլտէի օր: Այդ օրը կոմունիստական կուսակ-ցութեան շարք մը բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք համաձայն չէին Գորբաչովի «պերեստրոյկա-յի» քաղաքականութեան, ստեղծած էին արտակարգ դրութեան յանձ-նաժողով՝ նպատակ ունենալով պաշ-տօնանկ ընել ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին եւ վերա-կենդանացնել մահացող կայսրու-թիւնը:

Այսօր այդ իրադարձութիւն-ներուն անդրադարձած է նաեւ ինքը՝ Խորհրդային Միութեան առա-ջին եւ վերջին նախագահ Միխա-յիլ Գորբաչովը: «Ռիա Նովոսթի»-ի հետ ունեցած զրոյցին ան, մաս-նաւորապէս, յայտնած է, թէ՛ չ'ափ-սոսար, որ Օգոստոս 24-ին յեղաշր-ջումին հետեւանքով ստիպուած եղաւ լքել ԽՍՀՄ գլխաւոր քարտու-ղարի պաշտօնը: Անկեղծանալով, վերջինս, այդուհանդերձ, նշած է, թէ այդ որոշումը դժուարութեամբ ընդունած է: «Իրավիճակն այն ժա-մանակ շատ-շատ բարդ էր: Ըստ հուստեան, երկիրը սկսած էր փլուզ-ուիլ, եւ մենք կանգնած էինք քաղաքացիական պատերազմի վտանգին առջեւ: Չեմ ափսոսար, որ հրաժարուած եմ այդ պաշտօ-նէն, կ'ափսոսամ, որ փլուզուած է Խորհրդային Միութիւնը», - յայտ-նած է Գորբաչովը:

Վերջինս կոմունիստական կու-սակցութեան գլխաւոր քարտուղա-րի պաշտօնէն հրաժարած էր պիւտ-ճէն մի քանի օր անց՝ Օգոստոսի 24-ին, անկէ մի քանի ամիս անց ալ ստիպուած եղաւ հեռանալ նաեւ

Աւելի քան վեց տասնամեակներու վրայ տարածուող գաղափարական եւ զգացական սրտակցութիւնը կ'ամրապնդէր մեր բարեկամութիւնը: Պէջութի Պուրճ Համուտ կոչուող հայահոտ խառնարանին մէջ, այլապէս գատորոշուող մեր խմբակին մէջ, ինք արդէն, պատանի տարիքին, բանաստեղծն էր եւ այդպէս ալ մնաց բանաստեղծ՝ խառնուածքով եւ գործով, հետզհետէ ձեւաւորուող իր տաղանդով: Վկայ՝ 1970-էն մինչեւ իր շիջումը, լոյս ընծայուած երեք քերթողագիրքերը. «Ես կը սիրեմ կեանքը», «Միջնարար»ը, «Գիշեր եւ ցերեկ»ը եւ յետ մահու, իր գաւկիին կողմէ տպուած չորրորդ «Պարզեան օրերուն» հատորը, որոնք պարբերաբար բացառապէս ինքնատեղ Մաթեանին ապրած հոգեկան աշխարհը եւ անոր ներհայեցողութեան շրջափոխութիւնները, երազներն ու տագնապները, շրջապատ աշխարհի յարատեւ դէպի կարծրացում գացող փոփոխութիւններուն դիմաց:

Բանաստեղծը, արեւածաղիկի մը հանգոյն եւ կամ ջերմաչափի մը ճշգրտութեամբ, արտացոլացող իր անզայտելի գմայլանքն ու հիացումը բնութեան գեղեցկութիւններուն եւ տիեզերական սքանչազեղ խորհուրդներուն ընկալումով: Ան բուռն թափով սիրեց կեանքն ու մարդերը գանոնք օծելով բարութեան եւ գեղեցկութեան հեշտագեղ պարոյրով մը, եւ որոնք գինք դարձուցին քնարականօրէն երազային ուռման-թիւք մը

«Թաքուն կանչէ հմայուած ճամբայ կ'իյնամ առանձին...
Շուրջս փռուած ամէն ինչ, լեռ, դաշտ ու ծառ ու խոտն իսկ,
Ծով խորհուրդին մէջ իրենց ընկզմեր են հիմա գիս,
Չոր միջնաւ պահն այս կարծես ինձմէ պահած ըլլային...
Գեղաիրաշ տաճարի դարպասէն ցերս կը մտնեմ,
Որուն ջախերն երփնացող, ծաղիկներն են հրաշուի,
Ու կ'արբեմամ հովերուն կենսապարգել բոյրերէն,
Ինչպէս խունկի քուլայէն աղուամրմունց բուրվառի...»

Ու թեւ լուռ կը խոսկան իրել ժամուոր մ'երկիւղած,
Բայց կարկասով մը անզուսպ քովէ սահող գետակն այս,
Գոհութեամ երգս ժայթքած ընդերքներէն հոգիս...»

Չե՛մ գգար թէ ինչպէ՛ս կը բաժնէ մէկն ինձմէ գիս,
Կը սերմանէ մաս առ մաս Ձիս յանձնելով անհունի լուսատարած յորձանքին»:

Չգայապաշտ այս պայծառ քնարականութիւնը սակայն շուտով դէմ յանդիման գալով շրջապատի կարծր ու դաժան իրականութեան, եւ մանաւանդ կրելով երկրին միջբաղաբացիական երկարաշունչ պատերազմին, մահ ու աւեր սփռող անդոհանքը, բանաստեղծը նախ այլապէս, պիտի որոնէր հոգեկան այլ ապաստարաններ, չյանձնուելու համար բարձրացող յուսախաբուութեան պղտոր ալիքներուն: «Բլրակին տնակ»ն էր ան, որպէս «գիւրկ բացուած», ուր «անյայտ պարիկ մը հրաշք, արմատախիլ կը նետէ ցաւի տատանն

յօշոտող»:

Ուրիշ տեղ մը, կ'ապաւինի գիրքերու աշխարհի սպեղանիին, բացազանչելով.

«Հիմա նորէն... կողքերդ երկու թելիկներու պէս ծալլած,
Քեզ իմ կուրծքիս կը սեղմեմ՝ այրող սիրով մը վսեմ,
Որ միմիայն քեզի՝ հետ անցնիմ բախող ալ մահուան,
Ու Տէրն եթէ կամենայ որ ես կեանքի ետ դառնամ,
Նորէն գտնեմ քե՛զ միայն»:

Ան հետզհետէ կ'անդրադառնայ թէ մեքենական դարին գործած աւերները որքան եղծանած են իր սիրած մարդիկը եւ դառնացուցած իր պաշտած կեանքը: Աւելին, երկրին ազգամիջեան անվերջ պատերազմը քանդող՝ կը փակէ ելքի ամէն յոյս: Ա՛լ յուսախաբուութեան ոլորապտոյտն է գինք մըրկողը ու իր երգը քնքաքը թօթափելով, կը դառնայ ցատուծի ու բողբոջի ժայթք.

«Երկինքը վէս՝ երազներու վարդաստան,
Որուն վարդէն տարացել կը կազմէինք մենք փունջեր...
Հիմա դժոխք է դարձեր,
Որ խորտակած պատուարներն իր բարձրաբերձ,
Իր լաւային ժայթքով թէժ,
Կ'ողողէ մեզ անընդմէջ:

Ատելավառ գայրոյթի հնոցներուն մէջ ծուլուած՝
Թնդանօթներ ու հրթիռներ վիթխարի,
Իրենց բոցէ լախտերով կը հարուածեն անդադրում՝
...Տեղատարափ անձրեւի պէս վարարում՝
Կ'իջնէ հարուածն այդ լախտերուն մահասփիւռ,
Երդիքներուն վրայ բիւր ...՝
...Իսկ ես...
Արդ կը գոռամ՝
Ծագերն հիմէն դողող աղաղակով ահաձայն
Հերի՛ք այլեւս, հերի՛ք այլեւս,
Տուէ՛ք վերջ,
Արիւնարբու ցեմգութեան»:

Անկախ ժամանակի ու մթնոլորտի կապանքներէն, Մաթեան երկնած է նաեւ ութ տողանոց անվերնագիր բանաստեղծութիւններու ստուար խուրճ մը, «Գիշեր եւ ցերեկ» խորագիրով, ուր հակիրճ, հատու խտացումով եւ ճարտարութեամբ տարածած է պահին, դիպուածին ու տրամադրութեան առթած խոհերն ու մտորումները: Տեսակ մը կեանքի, մարդոց, երեւոյթներու հանդէպ մաթեանական դաւանանքներու իմաստասիրական շարահիւստութիւն: Ճաշակ մը տալու համար մէջբերեմ հատ մը.

«Դառնամ ու նորէն փա՛ռք տամ ես կեանքին,
Երկիրպագանեմ կեանքի՛ն ես դարձեալ,
Յաւերժ յոյգերու վսեմ արփի-ին,
Աւետարանի՛ն խոհերու անծայր:

Որքան ալ կեանքէն ես խոց ստանամ,
Հարուած ու դաւեր, մահացո՛ւ անկում,
Բայց իմ բաժակով լեցուող յաւիտեան՝
Կեանք, քու կեանքդ ես կ'ըմպեմ անդադրում»:

Մեր բոլորին պէս, Մաթեանն ալ ի վերջոյ հարկադրուեցաւ ձեռք

RAVISHED PARADISE ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

ՍԱՐՏԻԿ ՄԱՏԵՆՃԵԱՆ

Յուլիս 21, 2016 թուականին, Hollywood Book Festival-էն ստացուած Ե-նամակ մը կը շնորհաւորէր Ravished Paradise, Forced March to Nothingness գիրքս որ շահած էր պատմութեան սեռի առաջին մրցանակը:

Լուրը շատ ուրախալի էր անսպասելի ըլլալուն համար: Մրցումին մասնակցողները ամերիկացիներ էին, իսկ Ravished Paradise՝ հայկական ցեղասպանութեան մասին գրուած գիրք մըն էր: Մենք՝ հայերս, իրագեկ ենք թէ մեր դատը, մանաւանդ հայկական ցեղասպանութեան հարցը ինչպիսի անտարբերութեան կամ անհոգութեան ենթակայ է: Ուրախ էի այն բանին համար որ գիրքս խորտակած էր այդ արուեստական անտարբերութեան պատնէշը եւ մրցանակ շահած: Այս իրականութիւնը գիտաւելի կը շահագրգռէր քան մրցանակը:


Ես երբեք չէի կասկածած գիրքիս՝ Ravished Paradise, Forced March to Nothingness-ի որակին մասին: Անոր հայերէն թարգմանութիւնը՝ «Բռնագրաւուած Դրախտը, Բռնագաղթ Դէպի Ոչնչութիւն» գիրքը մեծ յաջողութեան արժանացած էր հայ ընթերցողներու կողմէն եւ նաեւ գնահատական նամակներով եւ խօսքերով ողողուած էր, նոյնիսկ արեւելեան եւ արեւմտեան ասիերու հայկական թեմերու առաջնորդներէն: Անոր յաջողութիւնը պատճառ դարձաւ որ երկու տարուայ ընթացքին վեց յաջող գիրքեր հրատարակեմ մէկը միւսին ետեւէն: Ամերիկեան եւ հայկական գրական պատմութեան մէջ անպատեհ բան մըն է, ոչ միայն գիրքերու հրատարակութիւնը, այլ անոնց գտած յաջողութիւնը շնորհիւ գրասէր ընթերցողներու, որոնք բոլոր հրատարակուած գիրքերէս կը գնէին:

Օգոստոս ամսու 18-ին, Հոլիվուտի Բուզվելթ Պանդոկին Պլոսոմ Բուսին մէջ տեղի ունեցաւ մրցանակաբաշխութեան արարողութիւնը: Այս՝ այն սրահն է ուր տեղի ունեցած էր սինեմայի առաջին Օսքարի հանդիսութիւնը 1929 Մայիս 16-ին: Օրուան հանդիսավարն էր Պրուս Զէռինկ, իրեն օգնական ունենալով տիկին Սթէյսին:

Երեկոյեան ժամը 7:30-ին սկսած ընկերային բաժինը ներկաներու ծանօթացումով տեւեց մինչեւ ժամը 8:15: Պատուով սեղան մը գետեղուած էր ուր հեղինակները իրենց մրցանակակիր գիրքէն օրինակ մը կը ցուցադրէին հետաքրքիր ներկաներուն:

Ապա տեղի ունեցաւ մրցանակաբաշխութեան հանդիսութիւնը: Մրցանակ շահողներու թիւը 156-ը կ'անցնէր, աւելի քան 15 գրական սեռերու մասնակցողներով, ինչպէս՝ գեղարուեստական կամ երեւակայական, բանաստեղծութիւն եւ կենսագրութիւն, եւն.: Ամերիկայի մօտ եւ հեռու նահանգներէն մասնակցողներ կային, սակայն բոլորը չէին եկած մրցանակին ստանալու: 12 սեռերու հեղինակներ ներկայ էին եւ անոնցմէ միայն 17 անձեր խօսելու փափաք յայտնած էին, որոնց մէջ կար նաեւ անուս:

Պարոն Զեռինկ խօսք առնող հեղինակին հակիրճ կենսագրութիւնը կուտար նախ, ապա կը հրաւիրէր խօսելու ներկաներուն



իր գիրքին մասին: Ես խօսք առնողներէն չորրորդն էի որպէս պատմութեան ժանրի-սեռի յաղթական հեղինակը: Կար երկրորդ մրցանակի շահող մը եւ չորս պատուոյ յիշատակութիւն ստացածներ: Գուցէ տասնեակ անգամներ գրեր էի, սրբագրած եւ փոխած ներկայացնելիք խօսքս: Կը յամառէի հայկական ցեղասպանութեան մասին ծանրանալ, սակայն երեք ըոպէ իրաւունք ունէի եւ անկարելի էր փափաքած նիւթս խօսիլ այդ կարճ ժամանակամիջոցին: Բարեբախտաբար ճառախօսութեան դասընթացքի հետեւած էի մի քանի տասնամեակ առաջ եւ լաւ գիտէի խօսելիք նիւթս հետաքրքրական ձեւով ներկայացնելու ունկնդիրներուն:


Մարտիկի խօսքը ներկայ մրցանակակիրներուն եւ հիւրերուն: «Բարի իրիկուն բոլորիդ: Եթէ փափաքիք սինեմայի որակով պատմական գիրք մը կարդալ, կամ եթէ ուզէք տեղեկանալ ամերիկեան պատմութեան չլսուած դէպքերու, Առաջին Աշխարհամարտի ճակատամարտերէն անծանօթ մնացած կուխներու եւ այդ ժամանակի քաղաքական էնթրիկներուն մասին, այս գիրքը կարդալու էք:

Մայիս 94 տարեկան էր 2001-ին, երբ անսպասելի կերպով ինձմէ խնդրեց իր կեանքի պատմութիւնը գրել: Երկու ամիս յետոյ մահացաւ եւ ես որոշեցի իր վերջին խնդրանքը կատարել:

Նախ գիրքիս խորագիրը կոչած էի «Առանց Մանկութեան Երեխաներ», որովհետեւ մանկութիւն չէին տեսած, այնպէս, ինչպէս աշխարհի միւս բոլոր երեխաները: Յետոյ չիչեցի հայրս, որ միշտ իր ծննդավայրին մասին «Երկրային Դրախտ» ըսելով կը խօսէր: Գիրքիս խորագիրը եղաւ «Բռնագրաւուած Դրախտը»: Հետագոտութիւններու ժամանակ, կարդացի Հալէպի կառավարչին մէկ նամակը ուղղուած Օսմանեան Ներքին Նախարարին, «Տասնեակ հազարներով գաղթականներ հաւաքուեցան հոս, ի՞նչ ընեմ»:

Նախարար Թալաթ կը գարմանայ որ մեծաթիւ գաղթականներ հասած են մինչեւ Հալէպ, մինչ ըստ իր ծրագրին, հայ կիներու, երեխաներու եւ տարեց մարդերու կարաւանները պէտք է ոչնչացուած ըլլային քիւրտերու եւ թուրք «Յատուկ Ջոկատներ»ուն կողմէ: Աւելցնեմ որ հայ տղամարդիկը

«ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԸ» (LES MARTYRES) ՕՓԵՐԱՆ



ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆ

Կատեթանոյ Տոնիգեթթիի «Մարտիրոսները» հայերու համար ունի յատուկ նշանակութիւն, քանի որ օփերայի գործողութիւնները տեղի կ'ունենան Հայաստանի մէջ, հռոմէական տիրապետութեան շրջանին, ուր քրիստոնէութիւնը գաղտնորէն բաւական տարածուած էր: «Մարտիրոսները» կը բնութագրէ Հայաստանի մէջ քրիստոնէաներուն հայածանքն ու նահատակութիւնը, ինչպէս նաեւ նորածին այդ կրօնքը, որուն գաղափարախօսութիւնը Հռոմի շահերուն խոտոր կը համեմատէր՝ արմատախիւ ընելու հռոմէական Կայսրութեան որդեգրած քաղաքականութիւնը:



Սըր Մարք Էլտըր -Sir Mark Elder

«Մարտիրոսները» Տոնիգեթթիի «Պոլիտոս» (Poliuto) օփերայի վերամշակուած տարբերակն է, զոր ան գրած էր իտալերէնով Նափոլիի մէջ, ուր գրաքննութիւնը արգիլած էր անոր բեմադրութիւնը:

Տոնիգեթթին երբ Փարիզ հաստատուեցաւ, «Պոլիտոս»ը հիմնովին վերամշակեց, բնագիրը փոխեց Ֆրանսերէնի եւ անոր տուաւ «Մարտիրոսները» (Les Martyres) խորագիրը: Բացի լեզուական փոփոխութենէն՝ հեղինակը նոր նիւթ աւելցուց բնագրին վրայ օփերան ֆրանսական մտայնութեան ու ճաշակին պատշաճեցնելու նպատակով: Այդ առաջադրութենէն մղուած՝ Տոնիգեթթին ընդարձակեց նաեւ նուագախումբին ծաւալը, յաւելեալ ասերգներ կամ երաժշտագրոյցներ (repitatives) գրեց եւ ստեղծեց պալէի բաժին մը, որ 1840-ականներուն շքեղ օփերաներու փարիզեան բեմադրութիւններուն պարտադիր մէկ մասը կը կազմէր:

Այս յօդուածը նպատակ չունի հանգամանօրէն ներկայացնելու Տոնիգեթթին եւ իր ստեղծագործութիւնները, այլ պարզապէս անդադառնալու վերջին երկու տարիներուն «Մարտիրոսները» օփերային արձանագրած աննախ-

ընթաց յաջողութեան. յաջողութիւն՝ որուն մէջ կարեւոր դեր ունեցան հայ ազգային երեք բարերարներ, յանձինս ՀՀ նախկին վարչապետ եւ այժմու լիազօր դեսպան Արմէն Սարգիսեանի, Վաչէ Մանուկեանի եւ Հայկ Տիտիգեանի, որոնց հովանաւորութեամբ՝ 4 Նոյեմբեր 2014ին Օփերա Ռարան (Opera Rara) Արքայական Ֆեսթիվալ Համերգասրահին մէջ (Royal Festival Hall) ներկայացուց «Մարտիրոսները» օփերայի համերգային տարբերակը, մասնակցութեամբ աշխարհահռչակ Orchestra of the Age of Enlightenment-ի, գոր դեկավարեց անուանի խմբավար Սըր Մարք Էլտըր -Sir Mark Elder:

Գլխաւոր դերերը կատարեցին ծոյս էլ խուրի -Pauline, Տէյվիա Քեմփսթըր - Severe եւ Մայքըլ Սփայրս - Michael Spyres-Polyeucte:

Հովանաւորելով «Մարտիրոսները» օփերայի բեմադրութիւնը՝ վստահ եմ մեր բարերար հայրենակիցներուն նպատակը եղած է միջազգային երաժշտական շրջանակներուն ուշադրութիւնը հրահարել այն իրողութեան վրայ, որ Հայաստան եղած է քրիստոնէութեան բնօրրաններէն մէկը եւ հայ ժողովուրդը ապրած է եւ իր մշակութային արժէքները ստեղծած՝ հիմնուելով քրիստոնէական սկզբունքներու եւ արժէքներու վրայ:

Երաժշտական այս բացառիկ երեկոն արժանացաւ բոլոր քննադատներու անվերապահ գնահատանքին եւ աննախընթաց արձագանգ գտաւ միջազգային մամուլի եւ լրատուական գործակալութիւններու հաղորդումներուն մէջ: Լոնտոնի մէջ արձանագրած իր

յաջողութենէն յետո՛յ Օփերա Ռարան Տոնիգեթթիի «Մարտիրոսները» բեմադրեց այլ հռչակաւոր դահլիճներու մէջ եւս, իսկ 2015-ին՝ հրապարակեց անոր ձայնագրութիւնը (CD):

Տեղին է նշել որ իտալական դասական օփերայի այս հիանալի նմուշին կրճատուած տարբերակը, «Պոլիտոս» անուամբ, Հայաստանի Օփերայի եւ պալէի ազգային թատրոնը ներկայացուցած է Տիգրան Լեւոնեանի բեմադրութեամբ 2001-ին՝ քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօնք հռչակման 1700-ամեակի առիթով (տես՝ «168 Ժամ» 22 Յունիս 2016):

Այս տարի Տոնիգեթթիի «Մարտիրոսները» արձանագրեց յաղթանակ մը եւս, երբ 15 Մայիս 2016-ին, Լոնտոնի մէջ կայացած Միջազգային Օփերայի Մրցանակաբաշխութեան ընթացքին անոր ձայնակաւառակը (CD) արժանացաւ առաջին մրցանակի:

Ուրախութեամբ նշեմք նաեւ որ անուանի երգիչ Գեղամ Գրիգորեանի դուստրը, օփերայի երգչուհի Յասմիկ Գրիգորեան, նոյն մրցանակաբաշխութեան ընթացքին շահեցաւ «երիտասարդ կին երգչուհի» բաժնի առաջնութիւնը:

Կատեթանոյ Տոնիգեթթի (Gaetano Donizetti)


Իտալացի աշխարհահռչակ կոմպոզիտոր Կ. Տոնիգեթթի ծնած է Պերկամոյ, 29 Նոյեմբեր 1797 եւ մահացած՝ 8 Ապրիլ 1848ին նոյն քաղաքին մէջ: Գերմանացի կոմպոզիտոր Սիմոն Մայր Կատեթանոն փոքր տարիքէն կ'առնէ իր հովանիին ներքոյ ձրիաբար ընդունելով զայն իր իսկ հիմնած երաժշտական դպրոցը, ուր ան կը ստանայ մանրակրկիտ ուսում, յատկապէս բազմաձայն երաժշտական երկեր յօրինելու բարձր արուեստի բնագաւառէն ներս: Դարձեալ Սիմոն

Մայրի ջանքերով՝ Կատեթանոն կ'ընդունուի Պոլոնիայի Ակադեմեան, ուր դեռ հազիւ 19 տարեկան ան կը գրէ իր առաջին մէկ-արարնոց օփերան: Իր կեանքի ստեղծագործական տարիներուն Տոնիգեթթին կը գրէ շուրջ եօթանասուն օփերա: 1822-ին Սան Քարլոյ թատրոնի հրաւերով Տոնիգեթթի կը տեղափոխուի Նափոլի, ուր կ'ապրի մինչեւ Յունուար 1844: Քսան երկու տարիներու ընթացքին Նափոլիի Սան Քարլոյ թատրոնը կը բեմադրէ Տոնիգեթթիէն 51 օփերա: 1840-էն



սկսեալ ան իր ստեղծագործական եւ բեմադրական աշխատանքները կը կատարէ Նափոլիի, Փարիզի, Հռոմի եւ Վիեննայի մէջ: Բացի իր գործերէն՝ Տոնիգեթթին կը բեմադրէ նաեւ ուրիշ կոմպոզիտորներու օփերաները: 1843-էն սկսեալ ծանր հիւանդութիւնը պատճառ կը դառնայ որ Տոնիգեթթին սահմանափակէ իր գործունէութիւնը: 1846-ին գինք կը տեղափոխեն մտային հիւանդներու յատուկ հաստատութիւն մը, ուրկէ 1847-ի աւարտին բարեկամները Տոնիգեթթին կը տեղափոխեն Պերկամոյ, ուր եւ կը վախճանի 1848 Ապրիլին:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506



Կազմակերպութեամբ՝
ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՈՒ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻՆ
ԸԱՅԱՍՏԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՐ
Դասախօս՝
ԳՈԿՏ. ՏԵՐ ԶԱԿԵՆ
ԱԿԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ
Այցելութեան ժապաւեճի ցուցադրութիւն
Հանդիսավար՝
ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ
Հինգշաբթի, **ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 2016**
Երեկոյեան 7:30-ին
ԹՍՄ ՊԵՇԿԵՕԹԻՐԵԱՆ ՍՐԱՀ
1901 N. Allen Ave., Altadena, CA 91001
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ / ՄՈՒՏՔԸ ԱԶՍ

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ ԶԵ ՈՒՏԵԼ ԱՌԱՒՕՏԵԱՆ ՊԱՐԱՊ ՍՏԱՍՈՔՍԻՆ

Առաւօտը օրուան սկիզբն է, ու իրմէ կախեալ է, թէ ինչ ընթացք պիտի ունենայ ամբողջ օրը: Ուստի շատ կարեւոր է օրը սկսիլ ճիշդ նախաճաշով: Չէ՞ որ նախաճաշն կարեալ է, թէ ինչպէս պիտի զգաք ամբողջ օրուան ընթացքին:

Բոլորս ալ վարժուած ենք առաւօտեան տարբեր ուտելիքներ ուտելու, սակայն քիչեր կը մտածեն, թէ որ ուտելիքները ժխտական ազդեցութիւն կ'ունենան մարմնին վրայ: Առաջին ուտելիքը շատ կարեւոր է, քանի որ պարապ ստամոքսին կ'ուղարկէք սնունդ, որ պէտք է ըլլայ սննդարար եւ, որ ամենակարեւորն է, չվնասէ առողջութեան:

Շատ ուտելիքներ, որոնք կը տեսնենք նախաճաշի սեղանին, ընդհանրապէս կարելի չէ ուտել պարապ ստամոքսին:

Այսպէս՝

1. Միթրուսային միրգեր-անոնք ունին գերզգայնութիւն յառաջացնելու յատկութիւն: Նոյնիսկ, եթէ գերզգայուն չէք, առաւօտեան սիթրուսային միրգ ուտելը կրնայ յանգեցնել գերզգայնութեան նշաններու: Կարելի չէ այդպէս ծանրաբեռնել լեարդը: Պարապ ստամոքսին նարինջի հիւթ խմելը կրնայ կազերու յառաջացման պատճառ դառնալ:

2. Պանան- պանանը կը պարունակէ մեծ քանակութեամբ մակնեզիում, որ կը բարելաւէ սրտի աշխատանքը: Սակայն պէտք չէ առաւօտեան արթննալէ անմիջապէս յետոյ պանան ուտել: Պարապ ստամոքսին կերած պանանը կրնայ խախտել մարմնի մէջ քալցիումի եւ մակնեզիումի կշիռը: Այնպէս

որ, մի գարմանաք, եթէ առաւօտեան պանան ուտելէ յետոյ ամբողջ օրուան ընթացքին թուլութիւն զգաք:

3. Հում բանջարեղէն- առաւօտեան հում բանջարեղէն ուտելը նոյնպէս կրնայ կազերու յառաջացման պատճառ դառնալ: Խնդիրը հում բանջարեղէնի թթուայնութիւնն է, որ կը վնասէ ստամոքսին պատերուն:

4. Մրգային մածուկ- ի հարկէ, եթէ առաւօտեան մրգային մածուկ ուտէք՝ չէք վնասեր ձեր մարմնին այնքան, որքան սիթրուսային միրգերու պարագային: Սակայն, դժուար թէ օգուտ ստանաք: Առաւօտեան մարմնին պէտք չեն յաւելու մանրէներ:

5. Պաղ խմիչքներ- պաղ ջուրը ընդհանրապէս վատ կ'ազդէ մարտողութեան վրայ, այդ իսկ պատճառով կարելի չէ պաղ ջուր խմել ուտելու ընթացքին: Իսկ եթէ առաւօտեան պաղ ջուր խմէք, ուստի ստամոքսը դժուար թէ ուրախանայ: Ամբողջ օրուան ընթացքին պիտի դանդաղեցնէք սնունդի մարտողութիւնը:

6. Քաղցրաւենիք- շատ հնարաւոր է, որ այն մարդիկ, որոնք շաքարախտով կը տառապին, նախապէս առաւօտեան քաղցր բաներ ուտելու սովորութիւն ունեցած ըլլան: Ենթաստամոքսային գեղձը ի վիճակի չէ առաւօտեան բաւականաչափ ինսուլին արտադրել, հետեւաբար՝ առաւօտեան քաղցրաւենիք ուտելը շատ վտանգաւոր է:

Ճիշդ կերէք, եւ ձեր ինքնագագողութիւնը ձեզ հաճելիօրէն պիտի գարմացնէ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ՉԱՄԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՄԱՔՐԵԼ ԼԵԱՐԴԸ

Չամիչը արժէքաւոր ուտելիք է ջրային համակարգը հանգստացնելու եւ քունը բարելաւելու համար: Չամիչի իւրաքանչիւր հատիկ, հակառակ իր փոքրիկ չափին, կը պարունակէ արժէքաւոր, անհրաժեշտ ու մարմնի համար չափազանց առողջարար նիւթեր:

Չամիչի օգտակար յատկութիւնները կը բացատրուին թարմ խաղողի առողջարար ըլլալու փաստով, սակայն արժէքաւոր նիւթերը անոնց մէջ 10 անգամ աւելի շատ են, քան թարմ խաղողի հատիկներուն մէջ: Չամիչը կ'ամրապնդէ ջրային համակարգը ու կը բարելաւէ քունը՝ շնորհիւ վիթամին B-

ի խումբերու մեծ քանակին: Անիկ կարելի է օգտագործել իբրեւ հանգստացնող միջոց, որ կը հանէ մարմնի լարուածութիւնն ու յոգնածութիւնը:

Լեարդը մաքրելը չամիչի միջոցով ամենաարդիւնաւէտ միջոցներէն մէկն է մարմնի բուժման ու քրոնիկ հիւանդութիւններէն ազատելու համար, չէ՞ որ նոյնինքն մարմնի աւելորդ նիւթերով ծանրաբեռնուածութիւնը կը խանգարէ անոր ինքնավերականգնման աշխատանքը, ինչպէս նաեւ զգալիօրէն կը նուազեցնէ դեղորայքի ու աւանդական բժշկութեան բաղադրատոմսերու ազդեցութիւնը:

ԱՆԿԱՆՈՆ ՈՒՏԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է ՈՒՂԵՂԻՆ ՅԱՍԱՐ

Լոս Անճելոսի մէջ գտնուող Քալիֆորնիոյ համալսարանի հետազոտական խումբը յայտնաբերած է թէ գիշերուան ուշ ժամերուն ուտելու սովորութիւնը հակառողջապահական երեւոյթ է, ոչ միայն ֆիզիքական առողջութեան, այլ նաեւ՝ մտային առողջութեան համար: Այս ծիրին մէջ գիտնականներ յայտնաբերած են նաեւ, թէ 15 միլիոն ամերիկացիներ աշխատանքային ժամերու պատճառով ունին անկանոն ուտելու սովորութիւն:

Ներկայ կեանքի պայմանները կը պահանջեն երկար աշխատանքային ժամեր, որուն ընթացքին մարդիկ յաճախ կը դիմեն արագ սնունդի, որ հասանելի է բոլորին՝ օրուան բոլոր ժամերու ընթացքին: Այս սովորութիւնը կը խախտէ մարմնի ներքին «ժամացույցը», որ կը կանոնաւորէ քնանալու, աշխուժութեան, ուտելու եւ մարմնին մէջ հորմոններու արտադրութեան ընթացքը:

Մարմնի ներքին «ժամացույց»-ի խախտումը կրնայ ընթացք տալ երկրորդ տեսակի շաքարախտի զարգացման եւ տկարացնել մարմնի դիմադրողական համակարգը: Սակայն Քալիֆորնիոյ համալսարանի գիտնականները յայտնաբերած են թէ ան նաեւ կրնայ թերացնել սորվելու եւ յիշողութեան կարողութիւնները:

Գիշերուան ուշ ժամերուն ուտելու սովորութիւնը կը խախտէ քնանալու ծիրը, ինչպէս նաեւ քնացած ժամանակ կ'աշխուժացնէ մարտողութեան համակարգը եւ պատճառ կը դառնայ սրտի արագ տրոփումներուն: Նախապէս կատարուած հետազոտութիւններ պարզած են թէ անկանոն ուտելու եւ քնանալու սովորութիւնները նաեւ կը բարձրացնեն քաղցկեղի, ընկճուածութեան, յոգնածութեան եւ սրտանօթային հարցերու հաւանականութիւնները:

ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ՎԻԹԱՄԻՆ D-Ի ՊԱԿԱՍԸ ՉՄՐԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ

Չմրան ընթացքին մեր մարմինը կը տառապի արեւային «սննդակարգէ» եւ մենք կ'ունենանք վիթամին D-ի պակաս, զոր տարուան միւս եղանակներուն կը ստանանք արեւէն:

Վիթամին D-ի շնորհիւ քալցիումը, ֆոսֆորը, վիթամին A-ը, մակնեզիումը եւ այլ օգտակար նիւթերը, որոնք կը պարունակուին սնունդի մէջ, կը ներծծուին մարմնի մէջ բարակ աղիքի միջոցով: Այդ պատճառով այս վիթամինին պակասը կը խանգարէ նաեւ օգտակար տարրերու ներթափանցումը մեր մարմնին մէջ:

Վիթամին D-ն նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակման գործընթացները, կը խթանէ որոշ հորմոններու աշխատանքը եւ շատ կարեւոր է ոսկորներու աճի, սրտի աշխատանքի, արեան մակարդեղիութեան համար: Վիթամին D-ն նաեւ կը կարգաւորէ ջրային համակարգի աշխատանքը:

Ինպէ՞ս լրացնել այս կարեւոր վիթամինին պակասը.

Պարզ է, որ վիթամին D-ի հիմնական աղբիւրը արեւն է եւ անոր պակասի պարագային պէտք է գտնել այլ ընտրանք: Չմրան ընթացքին,

երբ արեւոտ է, աշխատեցէք երկար զբօսնել: Վիթամին D-ի յառաջացման կը նպաստեն նաեւ օդային եւ ջրային լողանքները եւ մերսումը:

Շատ կարեւոր է նաեւ ձմրան ընթացքին օգտագործել այս վիթամինի պարունակութեամբ սնունդ՝ ինչպէս ձուկ եւ ծովային ուտելիքներ: Իւրոտ ձուկը վիթամին D-ի հիանալի աղբիւր է:

Կաթնեղէնը. Մէկ գաւաթ կաթը կը լրացնէ վիթամին D-ի օրական պահանջը: Նաեւ կարելի է օգտագործել պինդ տեսակի պանիր, կարագ:

Հաւկիթը. Տապկուած հաւկիթը ոչ միայն ամենահասարակ եւ յայտնի նախաճաշն է, այլ նաեւ ամենահամեղն ու օգտակարը: Առաւօտեան տապկուած հաւկիթը կ'ապահովէ օրական պահանջի 10%-ը, որ կայ անոր դեղնուցին մէջ:

Սունկը. Վիթամին D-ն սունկի մէջ կ'արտադրուի արեւու ճառագայթներուն շնորհիւ: Անոր քանակը չի փոխուիր սունկի պատրաստման եղանակէն:

Բուսական սնունդ. Յատկապէս օգտակար են ազատքեղը, եղինջը, առույտը, սոյան:

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ՝ ՅԱՍԵՂ ՈՒՏԵԼԻՔԻ ԲԱՂԱԴՐԻՉ

Միացեալ Թագաւորութեան մէջ գտնուող Օքսֆորտի համալսարանի հետազոտները իրենց հետեւողական ուսումնասիրութիւններուն շնորհիւ կը ջանան յայտնաբերել կապը՝ երաժշտութեան եւ ուտելիքի համի ըմբռնումին միջեւ: Հետաքրքրական է, որ երաժշտութեան տարբեր յատկանիշերը կրնան տարբեր ազդեցութիւն ունենալ համի ըմբռնումին վրայ: Ուսումնասիրութեան արդիւնքներուն համաձայն՝ բարձր ձայնաստիճան ունեցող երաժշտութիւնները, որոնց մէջ օրինակի համար կ'իշխէ սրինգը, կը շեշտեն ուտելիքի քաղցրութիւնը եւ թթուութիւնը: Իսկ ցած ձայնաստիճանի պատկանող երաժշտութիւնները կը շեշտեն լեղի համը:

Այս ուսումնասիրութեան գլխաւոր հեղինակն է հետազոտ՝ Չարլզ Սթէնս, որ կը բացատրէ թէ իր այս ուսումնասիրութեամբ ան կը փորձէ ցոյց տալ թէ ըմբռնումի եւ յատկապէս համերու ըմբռնումի ժամանակ մէկէ աւելի զգայարաններ կը գործեն միեւնոյն ժամանակ: Հետեւաբար, ըմբռնումը պարզապէս մտային աշխատանք մը համ զգացում մը չէ, այլ՝ փորձառութիւն է: Սթէնս իր ուսումնասիրութեան որպէս առարկայ ընտրած է համերու ըմբռնումը, որովհետեւ ան կ'ենթադրէ թէ յատկապէս համերու ըմբռնման ժամանակ է, որ զանազան զգայարաններ կ'օգտագործուին:

Ուտելիքի համի փորձառութեան մէջ ձայներու եւ երաժշտութեան կողքին մեծ դեր ունի նաեւ

ուտելիքին կազմուածքը: Երբեմն մարդիկ կը մերժեն ուտելիքը պարզապէս որովհետեւ անոր կազմուածքը հաճելի չի թուիր իրենց: Այս ուտելիքներու ամէնէն լաւ օրինակներէն է խակ արմաւը կամ խխունջը: Իսկ այլ ուտելիքներու պարագային, անոնց կազմուածքն է, որ հաճելի կը դարձնէ համը: Օրինակ ճէլոն, չիփսը, զովագուցիչ խմիչքները մաս կը կազմեն այս ուտելիքներու կամ ըմպելիներու շարքին:

Յաւելեալ բացատրութիւններ տալով իր կատարած հետազոտութեան մասին, Սթէնս դիտել կուտայ թէ ծովափին վրայ ձուկ ուտելը աւելի հաճելի է քան տան խոհանոցին մէջ ուտելը, որովհետեւ ձուկերու եւ ծովային պտուղներու հետ կապուած ծովուն ձայները կը շեշտեն ուտելիքին համեղութիւնը: Իր կատարած ուսումնասիրութիւններու ընթացքին, Սթէնս յաճախ խնդրած է մասնակիցներէն, որ ուտելիքի համեր կապեն տարբեր ձայնաստիճան ունեցող երաժշտութիւններու հետ:

Ուսումնասիրութեան արդիւնքներէն մէկնեղով, Սթէնս եւ իր հետազոտական խումբը կ'ըսեն թէ երաժշտութեան միջոցով կրնան 5-էն 10 համեմատութեամբ ազդել համի ըմբռնումին վրայ: Հետեւաբար, տօնական օրերուն կարելի է ի մտի ունենալ Սթէնսի կատարած այս հետազոտութիւնը եւ ընթացքի ժամանակ անպայման միացնել ձայնասփիւռը կամ հիւրերու նախասիրած երաժշտութիւնը:

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

ԷՐՏՈՂԱՆ ԵՒ ԿԻԼԵՆ...

Շարունակուած էջ 13-էն

մեղադրուած է գինք քննադատողները լուեցնելուն համար, նմանապէս՝ քիւրտերու հանդէպ իր վարած բիրտ քաղաքականութեան համար: Եւրոմիութեան դռները արդէն իսկ փակ են անոր դիմաց:

ԹՈՒՐԲՈՅ ՆԵՐԿԱՅ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուրբաթ, Յուլիս 15, 2016ին պետական հարուած մը տեղի ունեցաւ Թուրքիոյ մէջ:

Ըստ վաղահաս լուրերուն՝ բանակի մաս մը անդամներ փորձեցին էրտողանի կառավարութիւնը գէնքով տապալել: Քանի մը ժամ ետք, պետութիւնը յայտարարեց, որ փորձը ձախողած է եւ կացութիւնը պետութեան հսկողութեան տակ է: Բայց եւ այնպէս, պետութիւնը կոչ ըրաւ ժողովուրդին փողոցները եւ հրապարակները իջնելու՝ օրինակաւ թիւրքերու եւ ժողովրդավարութեամբ ընտրուած էրտողանի կառավարութիւնը պաշտպանելու համար: Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան անդամները տասնեակ հազարներով իջան փողոց, մաս մը՝ իրենց կառքերով, եւ փակեցին ճամբաները, անոնցմէ շատեր պատրաստուած էին գէնքերով. յեղաշրջումը երկար չտեւեց:

Հարուածը կազմակերպուած էր բանակի մաս մը դժգոհ սպաներու կողմէ, սակայն էրտողան առիթէն օգտուելով՝ Կիւլենի հետեւորդները ձեռք բերեցին զգաւոր անուանեց «գուզահեռ պետութիւն», որուն անդամները պետութեան բոլոր լծակներէն ներս կը գործեն եւ ենթակուած են Կիւլենին: Տասնեակ հազարաւոր մարդիկ ձեռք բերեցան, «Հիզմէջ» ի պատկանող հարիւրաւոր դպրոցներ փակուեցան եւ հազարաւոր ուսուցիչներ պաշտօնազուրկ եղան: Անոր պատկանող թերթերուն եւ սպարաններուն վրայ ձեռք դրուեցաւ, իսկ անոր ձայնասփռուի եւ պատկերասփռուի կայանները փակուեցան. հարիւրաւոր զինուորականներ, դատաւորներ, լրագրողներ - միայն «Չաման» թերթէն՝ 43 լրագրող - դեսպաններ եւ պետական պաշտօնեաներ ձեռք բերուեցան. պետական համալսարաններու եւ քոլեճներու 145 ատենապետներ ակամայ իրենց պաշտօններէն հրաժարեցան եւ անոնց արգիլուեցաւ արտերկիր ճամբորդել:

Յայտնի բան է, որ այդ ցանկերը նախօրօք պատրաստուած էին.

Իբրեւ հետեւութիւն՝ Թուրքիան Ամերիկայէն պահանջեց իրեն յանձնել Ֆեթհուլլահ Կիւլենը:

ԷՐՏՈՂԱՆ ԵՒ ԿԻԼԵՆ՝ ԻՐԱՐՈՒ ԴԷՄ

էրտողան եւ Կիւլեն, երկուքն ալ կը փառաբանեն Թուրքիոյ ազգային ինքնութիւնը եւ Օսմանեան պանծալի անցեալը, սակայն կը տարբերին Քիւրտերու խնդիրին, Իւրաքէլի եւ Միացեալ Նահանգներու հետ յարաբերութիւններուն առումով: Երբ էրտողանի կուսակցութիւնը հիմնուեցաւ 2001ին, Կիւլենի օրհնութիւնները ստացաւ, իսկ 2003էն 2013, Կիւլեն թիկուտք կանգնեցաւ էրտողանին. անոնք գործակցեցան տկարացնելու համար աշխարհիկ դատարանները կառավարութեան եւ բանակին մէջ. բաւարար

կա՛ն ալ չաջողեցան. իսկ երբ ժառանգը կիսելու հասան, ՀԻՆ բարեկամները ՆՈՐ թշնամիներ եղան: Կիւլենի շարժումը իր բաժինը ուզեց երկրի շահաբեր գործերէն եւ արտաքին առեւտուրի միջոցառումներէն. Կիւլեն ուզեց իր ղեկավարի հանգամանքը հաստատել եւ երկրի իշխանութիւնը էրտողանի հետ կիսել, ինչ որ էրտողանի մենատիրութեան գաղափարին յարիր չէր:

Վերջապէս՝ 2013ին, անոնց յարաբերութիւնները խզուեցան, եւ 10 տարուան բարեկամութիւնը թշնամութեան վերածուեցաւ: Կիւլեն մնայուն կերպով աշխատեցաւ իր ազդեցութիւնը ընդարձակել պետութեան մէջ եւ նոյն ժամանակ՝ էրտողանի կառավարութեան տկար կողմերն ու վարչակարգի փտութիւնը լուսարձակի տակ առնել: Այսպիսով՝ Կիւլեն եղաւ էրտողանի թիւ մէկ թշնամին:

ԹՈՒՐԲՈՅ ԱՊԱԳԱՅԻ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թուրքիոյ ապագային համար շատ կարեւորութիւններ ու տարբերակներ գոյութիւն ունին.

- Առաջին՝ երկիրը անկայուն պիտի մնայ: Այս մէկը կարելի է, թէեւ էրտողան Կիւլենի հետեւորդները կը չհզոքացնէ եւ քիւրտերուն ուժեղ հարուած կը հասցնէ անընդհատ, ան հզոր ոստիկանութեան կազմ մը կը պատրաստէ՝ իր շափանիչներուն համաձայն, եւ կրնայ ըլլալ, որ պատրաստուի նոր բռնակալ մը դառնալու, իսկ երկիրը բռնակալութեամբ կայուն չի պահուիր:

- Երկրորդ՝ էրտողան պիտի կարենայ շարունակել իր ծրագիրները Օսմանեան կայսրութիւն մը հիմնելու գծով, տնտեսական եւ կրօնական հզոր հիմքերու վրայ, սակայն արեւմտեան երկիրները պիտի չհանդուրժեն Թուրքիոյ՝ տնտեսագիտութեամբ մրցիլը իրենց հետ, Մերձաւոր Արեւելքի մէջ. նոյն կեցուածքը պիտի ունենայ նաեւ Ռուսիան՝ նախկին սովետական թրքախօս երկիրներուն մէջ: Էրտողանի օգտագործած կրօնքի խաղաքարտը ազդեցիկ պիտի չըլլայ այդ ժամանակ: Իրաք եւ Սուրիա շիի Պարսկաստանի հովանիին տակ կը գտնուին, եւ միւսները՝ ուհապի Մէլուտական Արաբիոյ. Եգիպտոս դէմ է ծայրայեղ իսլամականներուն, իսկ նախկին սովետական թրքախօս երկիրները աւելի աշխարհիկ համակարգեր ունին:

- Երրորդ՝ քիւրտերը անկախութիւն ձեռք կը բերեն եւ Թուրքիան կը պառակտուի: Միացեալ Նահանգները եւ Եւրոպա այդ մէկը տկարութիւն պիտի նկատեն ՆԱԹՕի իրենց դաշնակիցին հասցէին, եւ հաւանաբար, Քիւրտիստանի բանուորական կուսակցութեան (PKK) արմատներ ունեցող քրտական պետութիւն մը Ռուսիոյ հետ գործակցի, այլ ոչ թէ արեւմտեան երկիրներու հետ:

Պարսկաստանի համար այս մէկը վտանգաւոր կ'ըլլայ, իսկ քիւրտերը պատրաստ չեն անկախութեան տակալին:

- Չորրորդ՝ Թուրքիոյ ժողովուրդը ալ պիտի ձանձրանայ երկրի անկայունութենէն եւ պիտի պահանջէ, որ պետութիւնը քրտական հարցին խաղաղ լուծում մը գտնէ եւ դրացի երկիրներուն հետ լաւ յարաբերութիւններ գործարկէ:

Այս մէկը հնարաւոր չէ ներկա-

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱԹԵԱՆ

Շարունակուած էջ 15-էն

առնել ցուպն աստանդականութեան, խուսափելու համար Ֆիզիքական ոչնչացումէ: Ան եկաւ Ամերիկա իր ընտանիքով: Նոր միջավայր, նոր կենցաղ, նոր ու այլազան մտայնութիւններ ու ըմբռնումներ: Բոլորն ալ հակադրուող ու խորթ՝ քնարապաշտ բանաստեղծի հոգիին համար: Անոնց ընտելացումը մերժեցան եւ ընդվզումը որդեգրեց որպէս նոր երգերուն բնաբանը: Բայց այդ դրժումն իսկ ան ուզեց որ կոչուի դրական տարազումով՝ որպէս « Պարզեւն Օրերուն» որ սակայն լոյս աշխարհ եկաւ իր շիջումէն ետք, Չանքերովը զաւկին, տաղանդաւոր գեղանկարչ Վազգէն Մաթեանին, որ նաեւ գիրքը գծագարուած է ճաշակաւոր եւ խօսուն իր քանդակներ յիշեցնող, գեղանկարներով, ամբողջացնելով ու ընդգծելով հատորին ներքին մթնոլորտն ու ոգին եւ անոր տալով գեղարուեստական փայլ ալ:

Ընդհանրապէս մեծ վերապահութեամբ կը մօտենանք յետ-մահու հրատարակութիւններուն, որոնք հեղինակին իսկ կողմէն արժանի չեն նկատուած լոյսին բերուելու եւ պահ դրուած կ'ըլլան գործերուն մէջ, յետագայ մշակումի մտադրութեամբ:

Բարեբախտաբար, այդպիսի ճակատագիր չէ ունեցած սոյն գիրքը: Հեղինակը ինք, անձամբ սրբագրած ու դասաւորած է գայն, որպէս հերթական չորրորդ հատորը իր երկերուն: Մաթեան բանաստեղծին լիարժէք ստեղծագործութիւնն է այն, որպէս արգասիքը ամերիկեան անոր նոր կենսափորձին, երկնուած նոր ներշնչումներով:

Յարուածի Մաթեանի քերթողական առուն այս հատորով ալ հոսեցաւ վճիռ ու գուլալ զլլայացումով, ընդգրկելով հայ վտարանդի մարդուն տառապած ներաշխարհն ու երազները: Իր գլխաւոր յատկանիշը մնաց քնքշանքն ու հիացումը՝ բնութեան եւ տիեզերական անհաս խորհուրդին: Բայց փղոսկրեայ աշտարակի մէջ ալ չբանտարկեց ան ինքզինք: Ընդհակառակը, որդեգրեց քննադատութեան եւ այնպանումի մտրակումը յոռի եւ խորթ երեւոյթներու դէմ: Կեանքի դժուարին ուղիներն ու հակասութիւնները սակայն եկան վրդովելու իր հոգեկան պայծառութիւնը: Մասնաւորաբար ընդվզում ու մաքարութեան եւ մանաւանդ մարդը անբանացնող մեքենականութեան հանդէպ: Ասոնք կարեւոր պատճառներ՝ որպէսզի, ան, իր յուզական մաքուր աշխարհով, լուսաճաճանչ տեսլականով եւ անվհատ հաւատքով փոճ աշխարհին դէմ կերտէ քերթողական իր ուրոյն աշխարհը, որմով ապրեցաւ որպէս Մարդ եւ Հայ՝ միշտ համեստօրէն եւ խոնարհութեամբ, իմաստաւորութեամբ՝ իրեն տրուած ութսուն եւ հինգ տարիներու բարիքով:

Այսպէս կը տառապէր ինք երբ կ'ըսէր.
«...Կեանք մը՝ անհամ, անհմայ...»

յիս: Քիւրտերու հետ միասին նոյն երկիրը կառավարելու գաղափարը անընդունելի է Թուրքերուն համար, իսկ դրացի երկիրներուն պարագան եւս շա՛տ բարդ է:

- Հինգերորդ՝ պետական նոր հարուածի մը կարելիութիւնը, ինչպէս գրած է Ռապըրթ Ֆիսք, « Independent, 16 July 2016» որ պիտի

Կարծես ապրած ըլլայի ես անբնակ վայրի մէջ,

Ու իմ չորսդիս եռուգեռ կարծես չըլլար անընդմէջ...

Ես մարդոցմէ անհաղորդ, այնքան օտա՛ր եմ դարձոր,

Անոնց վազքէն յոգնասպառ, տուստանքէն անյատակ,

Ոչ մէկ շշուճ, արծազանգ դուռն հոգիս կը բախէր:

Ոչ մէկ թրթռ, ոչ մէկ յոյզ կ'ալեծփի կուրծքիս տակ,

Չկայ հնչիւնն իսկ երգի որ զիս խնդրով ողորդէր...:

Ո՞վ զիս յանկարծ վերածեց այսպէս ապրող դիակի,

Բարձունքներ տեսլալառ նետեց անդուճ մը անլոյս,

Օտարացուց զիս ինձի...»

Յստակ է թէ պատասխանատուն այդ «ո՞վ»-ին մարդոց ստեղծած նիւթապաշտութեան անողոք մթնոլորտն էր, «հոգիի սով»ը, որ կը քանդէր ամէն բարոյականութիւն եւ կ'ոչնչացնէր ամէն գեղեցկութիւն եւ քաղցրութիւն: Այս գեղծուած, նիւթապաշտ աշխարհին մէջ բանաստեղծին պիտի չարտօնէր, որ «իւր երգի կարգաչոյժ ան ոռոգէ տառապեալ մարդկութեան հոգին», «վառէ մոմի լոյս մը գէթ, դաւադիր մութն հալածող, բերէ անդորրը ամօքող մարդոց անքուն խռովքին, եւ ընծայուած անդորրն այդ իր անդորրը դառնար»:

Բանաստեղծին մեծագոյն կոչումն ու առաքելութիւնն է այս բաղձանքը եւ հպարտութիւնը:

Հակառակ կրած յուսախաբութիւններուն, իր բառերով՝ խութեւրուն, իր հոգին մնաց անբիծ ու պայծառ: Իր մեկնումն ալ ան կանխատեսեց լուսաւոր աչքերով: Իր նախորդ հատորին մէջ իսկ պատգամեց իր արհամարհանքը մահուան հանդէպ.

«Դո՛ւք, իմ մանկութեան մշտաթով վայրեր, Կրակ կարօտիս նժոյգով անսամձ,

Ես որ կը բերեմ ձեզի սիրտ մը սեր, Ու ձեր լանջերուն կը փարիմ արբած, Օր մ'անվերադարձ իմ մեկնումն անսեր, Կորուստիս վիշտով չտխրիք ի գուր, Ձի հոգիս գեփիւռն այն կ'ըլլայ յաւետ, Որ ձեզի անդուլ պիտի տայ համբոյր...»:

Հակառակ փշող այլազան խորթ հովերուն, ան հաստատակամ, հաւատարիմ մնաց իր ինքնուրոյն քնարական աշխարհին եւ գայն օժտեց շքեղ ու վճիռ հայերէնով մը, ուր ճշգրտութիւնն ու պերճանքը իր առաքինութիւնները դարձան: Հակառակ կեանքի ութսուն հինգ պատկառելի տարիներուն, ան մնաց երիտասարդ՝ բանաստեղծական իր ոգիով եւ ներշնչումներով: Հայրութեամբ եւ մարդկայնական մնայուն ոգեւորումով տոգորուած:

Յարգանք իր պայծառ յիշատակին:

Կարենայ սահմանափակել ծայրայեղ իսլամներուն ուժը եւ աշխարհիկ նախագահ մը նշանակել երկրին:

Այս մասին խօսելու համար շա՛տ կանուխ է.

Վատահաբար այլ հնարաւորութիւններու կարելիութիւններ եւս կան, եւ առաւել վստահ Թուրքիոյ ապագան լի է անակնկալներով:

ՄԱՅԱԶԳ

ՍԵՂԱ ԺԱՄԿՈՉԵԱՆ
Յուլիս 26, 1968 - Օգոստոս 20, 2016

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր կնոջ, մօր, զաւակի եւ
հարազատին ՍԵՂԱ ԺԱՄԿՈՉԵԱՆի մահը, որ պատահեցաւ Շաբաթ 20
Օգոստոս, 2016-ի կէսօրէ ետք ժամը 6:30-ին:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 26 Օգոստոս,
2016-ին, կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Կլէնտէլի Սուրբ Աստուածածին
Եկեղեցւոյ մէջ:

- Սգակիրներ՝
Ամուսինը՝ Վազգէն Պէրպէրեան
Զաւակները՝ Մերի եւ Անի
Մայրը՝ Էլմոն Աւագեան
Համայն ժամկոչեան Պէրպէրեան եւ Աւագեան

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ.
Արսէն Կիտուր մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները իրենց
խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աչրիին՝
Տիկ. Արաքսիին, ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար
Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Անի Գասպարեանին:

ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի
վարչութիւնն ու անդամները իրենց խորազգաց ցաւակցութիւնները
կը յայտնեն հանգուցեալի աչրիին՝ Տիկ. Արաքսիին, ընտանեկան
համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութիւն
եւ Անի Գասպարեանին:

ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ.
Պետրոս Սէֆէրեան իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի
ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ.
Յարութիւն եւ Անի Գասպարեանին եւ փոխան ծաղկեպսակի 100 կը

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ

Շարունակուած էջ 8-էն

Համար հակառակ է մշտապէս աշակերտի
կերպարի մէջ մնալ: Ուրեմն, կոչուած ենք դառնալու ճարտարապետը
մատաղ սերունդի հոգին մշակելու ու անոր հուժեանքը մէջ հաստատելու
ինքնութիւն, որն աստուածային մեծագոյն պատիւ մըն է»:

Թեմի Քրիստոնէական Դաս-
տիարակութեան Պատասխանատու՝
Մաշտոց Չօպանեան անդրադարձաւ
ազգային ինքնութեան հարցերուն՝
զանոնք համադրելով կրօնական,
Աստուածաբանական եւ բարոյական
չափանիշներուն:

Նշանաւոր գիտնական՝ Փրոֆ.
Կարօ Մոմճեանի դասախօսութեան
նիւթն էր «Հայոց Պատմութիւն»
առարկայի դասաւանդման դերը
հայուն ինքնութիւնը գործին մէջ:
Բանախօսը առաջնորդուելով
արիստոտէլեան յայտնի սկզբունքով,
հաճելի երկխօսութիւն սկսաւ
ներկաներուն հետ եւ զանոնք
առաջնորդեց պատմական անցեալի
եւ ներկայի ազգային ինքնութեան
եւ լինելութեան հանգրուաններով՝
միաժամանակ կարեւորելով
համաշխարհային փորձը եւ արդի
մօտեցումները:

Աշխատանիստի վերջին
բանախօսն էր Դոկտ. ԷՄԼԻ
Անդրէասեան, որ ամփոփեց օրուան
նիւթը՝ գուզահեռելով գործնական,
խմբային աշխատանքով, հարց ու
պատասխաններով:

Համաժողովի վերջաւորութեան,
Թեմի տարբեր շրջաններէն
ժամանած աւելի քան յիսուն
մանկավարժներուն իր բարեմաղ-
թութիւնները փոխանցեց եւ
համաժողովը աղօթքով փակեց
Առաջնորդական Ընդհանուր
Փոխանորդ եւ Շաբաթօրեայ
Վարժարաններու Հոգաբարձութեան
Վերատեսուչ՝ Հոգչ. Տ. Բագրատ Մ.
Վրդ. Պերճէքեան: Հայր Սուրբ
ներկաներուն փոխանցեց նաեւ
Առաջնորդ Սրբազան Հօր հեղինա-
կած վերջին հրատարակութիւնները:

Կը սկսի ուսումնական նոր
տարին: Ուսուցիչները խանդավա-
ռութեամբ եւ հոգեւոր ցնծութեամբ
լեցուած կը սկսին իրենց ազգանուէր
ծառայութեան՝ մեր զաւակներուն
հայեցի դաստիարակութեան,
ազգային ինքնութեան պահպանման
եւ Թորգոմեան ազգի յարա-
տեւութեան:

Բարի ե՛րթ 2016-2017
ուսումնական տարեշրջանին:

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կ'իմանանք թէ Տօքթ. Յուլիա եւ Տիկ. Մօնիքա
Գազանճեաններ բախտաւորուած են առջնեկ երկուորեակ դուստրերով
եւ անուանած Մարլօ-Մայտա եւ Արիա-Հոնիփսիմէ:

Մեր ջերմ շնորհաւորութիւններն եւ երջանիկ կեանքի բարեմաղ-
թութիւնները նորածիններուն, անոնց ծնողներուն եւ մեծ հայրերուն
ու մեծմայրերուն, մասնաւորաբար՝ Տօքթ. Արշակ եւ Տիկ. Վարդուհի
Գազանճեանին:

RAVISHED PARADISE ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ

Շարունակուած էջ 8-էն

գինուորագրուած էին եւ արդէն
սպաննուած իրենց թուրք զինակից-
ներուն կողմէ:

Թալաթ Հալէպի կառա-
վարչին կը հրահանգէ «Դէպի
ոչնչութիւն ուղարկէ», դէպի
անապատ, ու ես գրքին ենթա-
խորագիր ընտրեցի «Բռնագաղթ
Դէպի Ոչնչութիւն» յաւելուածը,
Forced March to Nothingness:

Ծնողքիս կեանքին մասին
բաւական տեղեկութիւն չունէի:
Զէին ուզեր յիշել իրենց անցեալի
զարհուրանքները որոնց ականատես
եղած էին իրենց մանկութեան
ժամանակ եւ այդ ահուելի
տեսարանները մղձաւանջի պէս
իրենց մտքին մէջ կը յաճախէին:

Ravished Paradise, Forced March
to Nothingness (ցոյց տալով գիրքը)
ծնողքիս պատմութիւնը չէ որպէս
ցեղասպանութեան գոհեր կամ
վերապրածներ, այդ նաեւ ամերիկե-
ան պատմութիւն է, համ-
աշխարհային պատմութիւն է որ կը
սկսի Խաչակիրներու վերջին
տարիներէն եւ կ'ընթանայ մինչեւ
1922 թուականը: Այս գիրքը գրեցի
որպէսզի հայկական ցեղասպա-
նութեան մասին իրազեկ դարձնեմ
ոչ-հայերը, երբ 100 տարիէ աւելի
թրքական պետութիւնը յամառօրէն
կը մերժէ ցեղասպանութիւն որակել
այդ քստմնելի դէպքերը:

Ապրիլ 2015-ին, Ֆրանսիս
Սրբազան Պապը հայոց դէմ
գործուած ջարդերը իրենց բուն
անունով կոչեց «դարուս առաջին
ցեղասպանութիւնը», որուն
հետեւեցաւ Գերմանիոյ Պոլսոյ
թալակ Յուլիս 2016-ին, ճանչնալով
ցեղասպանութիւնը եւ ընդունելով
իր մեղսակցութիւնը: Յիշենք որ
Առաջին Համաշխարհային Պա-
տերազմին ժամանակ, Գերմանիա
Օսմանեան պետութեան դաշնակիցն
էր եւ լաւատեղեակ՝ պատահած
վաշրագութիւններուն եւ բնա-
ջնջման:

Տասներկու տարի ճամբոր-
դեցի, հետազօտեցի պատմական
դէպքեր, այցելեցի երկիրներ՝
Թահիթիէն սկսեալ մինչեւ
Հայաստան, Լիբանանէն մինչեւ
Ֆրանսա, Թուրքիա եւ տարբեր
երկիրներ, եւ երեք հատոր լեցնելու
չափ տեղեկութիւն հաւաքեցի: Այս
գիրքը (ցոյց տալով գրքն) առաջին
մասն է եռահատոր գիրքին եւ այս

մրցանակը կը նուիրեմ ծնողքիս
չիշատակին եւ հայկական ցեղասպա-
նութեան գոհերուն:

Հայերէն հրատարակած
գիրքերս յաջողութեան արժանացան
եւ կը յուսամ որ անգլերէն այս
գիրքն ալ անոնց նման յաջող
ճակատագիր ունենայ:

Շնորհակալ եմ ձեր ուշադ-
րութեան եւ շնորհակալութիւն
Hollywood Book Festival-ի
կազմակերպիչներուն: Կը յուսամ որ
պիտի կարդաք մրցանակի տիրացած
այս գիրքը: Պատմական դէպքերու
մասին իրազեկ դառնալու միջոց
մըն է որոնց հաւանաբար տեղեկ
չէք կամ մոռցած կրնաք ըլլալ»:

Հանդիսութեան աւարտին,
Պարոն Հեռինկ հրաւիրեց ներկայ
մրցանակակիրները խմբային նկար
մը քաշուելու:

Հանդիսութեանէն ետք, երեք
ներկաներ եկան իրենց դրուա-
տականը տալու եւ շնորհաւորելու:
Հարց տուին թէ «ինչո՞ւ թուրքիա
կը մերժէ ճանչնալ պատմական
փաստ մը: Հարիւր տարի անցած է
եւ տակաւին չընդունիր մեղքը»:

- Որովհետեւ կը վախնայ
հետեւանքէն: Պատկերացուցէք
հասարակ ոճրագործ մը. ան գիտէ
թէ երբ մեղքը խոստովանի, պիտի
դատապարտուի: Մեր հայրենի
հողերը բռնագրաւած են կարծէք
իրենց պապերէն մնացած ժառանգ
ըլլայ եւ չեն ուզեր դատ մը զիջիլ
այդ հողերէն: Սեւուր դաշնագրով
ընդունեցին պարտութիւնը, սակայն
Լոզանի դաշնագրով, որ տեղի
ունեցաւ առանց հայերու մասնակ-
ցութեան, Քեմալ յստակօրէն
պայմանաւորած էր ըսելով, «Ո՛չ
մէկ թիզ հայերուն եւ ո՛չ ալ
Հայաստանի մը գոյութիւնը մեր
սահմաններուն մօտ»:

Այդ բացատրութիւնը բաւա-
րար եղաւ յաւելեալ մանրա-
մասնութիւն մը տալու հարցնող
ներկաներուն:

Հետեւեալ օր ստացայ նոր Ե-
նամակ մը ուր կ'ըսուէր, «Հովիվուտի
հին կախարդանքը երէկ գիշեր
կենդանի էր պատմական Բուզլեյթ
Պանդոկին մէջ 2016-ի լաւագոյն
գիրքերու մրցանակաբաշխութեան
ժամանակ: Լսեցինք զանազան
սեռերու հեղինակներ, սկսեալ 91-
ամեայ գրողէն մինչեւ ամենէն
երիտասարդը: Մարտիկ Մատէնճ-
եան խանդավառօրէն ներկայացուց
Հայոց Պատմութիւնը»:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----³

Tel:----- Email:-----

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՌԻՕ-2016. ՀԱՅ ՍԱՐՁԻԿՆԵՐԻ ԵԼՈՅԹՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ



Ռիո Տէ Ժանէյրոյում աւարտուած 31-րդ ամառային Օլիմպիական խաղերին Հայաստանը յայտաւորուել էր 32 մարզիկով՝ 7 մարզաձեւում (աթլետիկա, բռնցքամարտ, սպորտային մարմնամարզութիւն, ճիւղօ, ծանրամարտ, լող, ըմբշամարտ):

1 ոսկէ, 3 արծաթէ մետալով Հայաստանը մետալային հաշուարկում զբաղեցրեց 42-րդ տեղը:

ԱԹԼԵՏԻԿԱ

Աթլետիկայի թիմը Ռիո-2016-ին ներկայացել էր 5 մարզիկով եւ գրանցեց համեստ արդիւնք: Ամալիա Շառոյեանը 36-րդ տեղը գրաւեց հեռացատկի մրցաշարում, եռացատկորդ Լեոն Աղասեանը եւս 36-րդն էր: Լիլիթ Յարութիւնեանը 400 մետր արգելափազքում գրաւել էր վերջին՝ 48-րդ տեղը, իսկ արագավազորդներ Տիանա Խուբեսերեանը եւ Գայեանէ Չիլոյեանը հանդէս եկան 200 մետր վազքում: Չիլոյեանը զբաղեցրել էր 66-րդ տեղը, Խուբեսերեանը՝ 67-րդ: Աթլետիկայի թիմից օլիմպիական ուղեգիր ունէր նաեւ հեռացատկորդ Գոռ Ներկարարեանը, որը չէր յայտաւորուել խաղերին:

ԲՈՆՑՔԱՍԱՐՏ

Բռնցքամարտի հաւաքականը Ռիո էր մեկնել 5 մարզիկով եւ մնաց առանց մետալի:

49 կգ քաշային Արթուր Յովհաննիսեանը մեկնարկային մենամարտում 0:3 հաշուով պարտուել էր սպանացի Սամուէլ Հարմոնա Հերերային եւ դուրս մնացել պայքարից:

52 կգ քաշային Նարեկ Աբգարեանն առաջին մենամարտում 2:1 հաշուով յաղթել էր Ուզանդայի ներկայացուցիչ, 31-ամեայ Ռոնալդ Սերուգոյին, իսկ 1/8 եզրափակիչում 0:3 հաշուով պարտուեց աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր, չինացի Յիանգուան Հուին:

56 կգ քաշային Արամ Աւագեանը յաղթանակով մեկնարկելուց յետոյ 1/8 եզրափակիչում պարտուել էր 2015թ. աշխարհի ու Եւրոպայի ախոյեան, իռլանդացի Մայքլ Քոնլանին: Մեկնարկում 25-ամեայ Աւագեանը 2:1 հաշուով ուժեղ էր գտնուել ճապոնացի Արաշի Մորիսակայից:

64 կգ քաշային Յովհաննէս Բաչկովը եւս մեկնարկել էր յաղթանակով, իսկ 1/8 եզրափակիչի մենամարտում պարտուել էր 28-ամեայ չինացի Քսեանսուն Հուին: 1/16 եզրափակիչում Յովհաննէս մենամարտել էր 24-ամեայ վենեզուելացի Լուիս Մարտին Արկոնի հետ եւ յաղթել 2:1 հաշուով: Այդ մենամարտի առաջին ռաունդում Բաչկովը նոկդաութն էր ենթարկուել, բայց կարողացել էր շարունակել պայքարը եւ հասնել յաղթանակի:

69 կգ քաշային Վլադիմիր Մարգարեանն էլ երկրորդ մենամարտի առաջին ռաունդում հոնքի արնահոսող վնասուածքի պատճառով տեխնիկական նոկաուտով պարտուել էր Լոնտոն-2012-ի Օլիմպիական խաղերի ախոյեան (64 կգ քաշային կարգում), 27-ամեայ քուպացի Ռոնիէլ Իգլեսիասին: 1/16 եզրափակիչում Վլադիմիր Մարգարեանը 3:0 առաւելութեամբ յաղթել էր Ֆիլիպին ներկայացուցիչ Ուինսթոն Հիլին:

ՃԻՒՂՕ

Ճիւղոյի մրցաշարում Հայաստանի միակ ներկայացուցիչ Յովհաննէս Դաւթեանը մեկնարկային գոտեմարտում յաղթել էր աւստրիացի Լիւդվիկ Պախչերին, իսկ 1/8 եզրափակիչում պարտուել էր ռուսաստանցի Բեսլան Մուդրանովին, որը նուաճել էր Ռուսաստանի առաջին ոսկէ մետալը Ռիո-2016-ում:

ԼՈՂ

Ռիո-2016-ում Հայաստանի պատուիրակութեան դրօշակակիր Վահան Մխիթարեանն ուժերը փորձեց ազատ ոճով 50 մետրում եւ գրաւեց 47-րդ տեղը: Մոնիկա Վասիլեանն էլ յայտաւորուել էր կանանց ազատ ոճի 50 մետրի մրցմանը, սակայն հանդէս չէկաւ ձեռքի վնասուածքի պատճառով:

ԾԱՆՐԱՍԱՐՏ

Հայ ծանրորդները Հայաստանին պարգևեցին 2 արծաթէ մետալ: Հայաստանի առաջին մետալը Օգոստոսի 15-ին նուաճեց 19-ամեայ Միմոն Մարտիրոսեանը, որը երկրորդ տեղն էր գրաւել 105 կգ քաշային կարգում: Գերծանը քաշային Գոռ Մինասեանն էլ արծաթէ մետալակիր էր դարձել յաջորդ օրը: Գերծանը քաշային կարգում հանդէս եկաւ նաեւ Ռուբէն Ալեքսանեանը, որը զբաղեցրեց չորրորդ տեղը:

77 կգ քաշային Անդրանիկ Կարապետեանը եւս մետալի իրական չաւանդորդ էր, բայց հրում վարժութեան ժամանակ վնասեց ձեռքը եւ լքեց պայքարը: 85 կգ քաշային Առաքել Միրզոյեանը պոկում վարժութիւնում երկրորդ փորձից բարձրացրեց 158 կգ, սակայն երրորդ փորձին չմօտեցաւ: Նա ոտնաթաթի վնասուածք էր ստացել եւ չմասնակցեց նաեւ հրում վարժութեանը:

Կանանց մրցաշարում Նագիկ Աւագլեանը (69 կգ) գրաւեց 5-րդ տեղը, իսկ Սոնա Պողոսեանը (75 կգ) բաւարարուեց 10-րդ տեղով:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՄՆԱՍԱՐՁՈՒԹԻՒՆ

Հայաստանի առաջատար մարմնամարզիկներից Յարութիւն Մերդինեանը յետոյ թափեր վարժութիւնում դուրս եկաւ եզրափակիչ եւ գրաւեց 7-րդ տեղը: Արթուր Դաւթեանը չչաղթահարեց հենացատկի վարժութեան որակաւորման փուլը: Հուսի Գեբեշեանն էլ դարձաւ Օլիմպիական խաղերի սպորտային մարմնամարզութեան կանանց մրցաշարի պատմութեան մէջ Հայաստանի առաջին ներկայացուցիչը, բայց ամերիկահայ մարզուհին չչաղթահարեց որակաւորման փուլի արգելքը եւ լքեց պայքարը:

ԸՍՐՇԱՍԱՐՏ

Յունահունձեական ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականը Ռիո-2016-ին ներկայացել էր 4 մարզիկով եւ մէկ ոսկէ եւ մէկ արծաթէ մետալով թիմային հաշուարկում գրաւեց երրորդ տեղը՝ զիջելով միայն Կուբային ու Ռուսաստանին: Աշխարհի կրկնակի ախոյեան Արթուր Ալեքսանեանը ոսկէ մետալ էր նուաճել 98 կգ քաշային կարգում, իսկ 66 կգ քաշային Միհրան Յարութիւնեանը եզրափակիչում կողմնակալ մրցավարութեան պատճառով պարտուել էր աշխարհի 2014թ. ախոյեան, սերբ 30-ամեայ Դաւոր Շտեֆանեկին եւ բաւարարուել արծաթէ մետալով: Արսէն Զուլֆալակեանը (75 կգ) եւ Մաքսիմ Մանուկեանը (85 կգ) պարտուել էին մեկնարկային գոտեմարտերում եւ լքել պայքարը:

Ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի թիմի ելուցիչը յաջող չստացուեց: Նախ Գառնիկ Մնացականեանը (57 կգ) պարտութեամբ մեկնարկեց եւ լքեց պայքարը, իսկ Լեւան Բերիանիձէն (125 կգ), պարտուելով կիսաեզրափակիչում, չէր յաղթել նաեւ պրոնզէ մետալի համար գոտեմարտում: 65 կգ քաշային Դաւիթ Սաֆարեանը եւ 97 կգ քաշային Գերոգի Կետուելը հանդէս եկան խաղերի վերջին օրը եւ պարտուեցին մեկնարկում:

ՀՐԱՁԳՈՒԹԻՒՆ

Հրաձգութեան մրցաշարում Հայաստանի միակ ներկայացուցիչ Հրաչիկ Բաբայեանը 24-րդն էր օդամուղ հրացանի 10 մետրի մրցաշարում:

ՄԻՇԱ ԱԼՈՅԵԱՆԸ ՆՈՒԱԾԵՑ ԱՐԾԱԹԵ ՄԵՏԱԼ



Ռուսաստանը ներկայացնող Միշա Ալոյեանը դարձաւ Ռիո Տէ Ժանէյրոյում աւարտին մօտեցող ամառային Օլիմպիական խաղերի փոխախոյեան:

52 կգ քաշային կարգի եզրափակիչում հայ բռնցքամարտիկը 0:3 հաշուով պարտուեց Ուզբեկստանի ներկայացուցիչ Շախրուբին Զոիրովին եւ բաւարարուեց արծաթէ մետալով: Այս քաշային կարգում պրոնզէ մետալակիրներ դարձան վենեսուելացի Յոնէլ Ֆիլոն ու չինացի Զիանգուան Հուն:

Յիշեցնենք, որ 27-ամեայ Միշա Ալոյեանը ծնուել է Հայաստանի Բամբակաշատ գիւղում, այժմ ապրում է Նովոսիբիրսկում: Լոնտոն-2012 Օլիմպիական խաղերում նա արծանացել էր պրոնզէ մետալի: